

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ. «Հանրային բարոյական» և գաւառ... ՇԱՀԵՆ
 ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ. ԺԻՒՂ ՎԷՐՆ (ԺԻՒՂ ՀՈՇ) Թարգմ... Լ. Բ.
 ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. Հանրապարհորդական նկատողութիւնք... ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ
 ՆՈՐԱՎԷՊ. Նարոյէն Ա. Կայսեր մէկ վրեժառուութիւնը (ՇԱՐԼ ԿԷՕԼԷԹ)
 ԱԶԳԱՅԻՆ. Յայտարարութիւն Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի ըն-
 կերութեան
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Ծնունդ փրկչին Ե. Զ.
 ՔԱՂԱՔԱՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին, Ազգային.....
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՕՆԹԷԲԵՆ) Թարգմ... Մ. ԶՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻԱ ԵՆ ԳԱԼԱՌՆԵՐՈՒ — տարեկան..... Կէս Օսման • ոսկի
 » » » վեցամսեայ..... Բառ » »
 Մէկ Թերթին գինն է 60 փարայ
 Օտար քաղաքաց համար տարեկան..... 42 ֆրանք
 » » » վեցամսեայ..... 6 »
 Թղթատարութեան ծախք տարեկան..... Դահ. արծ. 15
 վեցամսեայ » » 7 1/2

Մասիսի Խմբագրութեան ուղղեալ ո' եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
 Դալաթիա, Նորատուհնեան Խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱՒԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 4 Յունվար

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

ամիս Լոնտրայի վրայ (պանքային)	110 5/8
3 » » (վճռահան)	110
3 » Բարի Լ. » (պանքային)	22 87 1/2
3 » » (վճռահան)	22 95

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՑ

Օսմանեան Բոնսոյիտէ

Երէկ երեկոյ գոցուեցաւ..... ԳՀԿն.....	8 36 1/2
Պորսային գոցուելէն վերջը	8 37
Բերայի մէջ	—
Առաւօտուն բացուեցաւ	8 36
Բարձրագոյն գին	8 36 1/2
Նուազագոյն	8 36
Կէս օրին	8 36 1/2
Իւնիֆիէ Եգիպտական (Գ. Կ.).....	71 25
Երէկ իրիկուն գոցուեցաւ	71 22 1/2
Բերայի մէջ	—
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	71 20
Կէս օրին	71 20
Հէվալէսիզ	—
Բէքօր գոնսօլիտէի.....	—
» Իւնիֆիէի	—
Փոխառութիւն 1863	72 50
» 1865	56
» 1869	49 25
» 1873	43 75
Պոն տիւ Բրէքօր	Անգլ. Լ. ր. 20 25
Բուսէլի երկաթուղի	Ֆր. 45 50
Օպիկտսիօն տը Բրիօրիթէ	»
Բաժնեթուղթ Լաւրիօմի	»

ԲԱՅՆԵՏՈՒՄՔ

Սօսիթէ Ե. Կ. Կ. Լ. ր.	3 48
Քրէտի Ե. Կ. Կ. Լ. ր.	6 30
Պանք տը Գ. Կ. Կ. Լ. ր.	5 04
Սօս. Շանթ է վալէօր	Օսմ. Լ. ր. 3 40
Բարաճէյ	»

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	772 ... 100
20 Ֆրանքնոց	» ... 87 27
Սնգլիական ոսկի	» ... 110 20
Բօլ Իմբէրիալ	» ... 90 08
Քրիմից	» ... 51 45
Բուսլի թղթադրամ	» ... 8 68
» արծաթ	» ... 89 40
Ֆիօրին	» ... 9 02
Մէճ. արծ. (տարբ.)	» ... 108 —
Վէցնոց	» ... 102 35
Հինգնոց	» ... 102 35
Մէթալիք	» ... 99
Պղինձ	» ... 780
Թղթադրամ	» ... 3500

ԵՐԻՐՈՒԹՅԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 15 Յունվար ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսօլիտէ գոցուեցաւ	100
Օսմ. բացուեցաւ	46
» » գոցուեցաւ	46 1/16
Օսմ. փոխառութիւն 1865	41 1/8
» » 1869	40
» » 1874	68 5/4
» » 1872	49
» » 1873	8 7/8
Փոխառութիւն	1877
Պանք Օթօման	43 5/4
Բուսական փոխառ. 73 (գ. Կ.)	95 5/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	64 5/8
» առանձն. (Բրիտիշ)	88 1/8
Տպրա Սանիէ	62 1/2
Տօմինիալ (փոխառ. Բօշիլտ)	87 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877.....	—
Փոխառութիւն Բարիլի վրայ	25 55

Վիեննա, 15 Յունվար ժամ 10 վ. 30 երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ	124 20
Օսմանեան երկաթուղի	22

Բարիզ, 15 Յունվար ժամ 3 վայր. 15 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	109 62 1/2
» » 3 0/0.....բաց	79 55
Օսմանեան քոնսօլիտէ բացուեցաւ	46 22 1/2
» » գոցու. (գ. Կ.)	46 22 1/2
» » 1865	57
» » 1869	50
» » 1873	44
Օսմանեան երկաթուղի	46 12 1/2
» Բէժիլ Բաժնեթուղթ	512 50
Պանք Օթօման	603 75
Գրէտի Լիօնէ	532 50
» Ֆոնիէ (գ. Կ.)	1320
Բաժնետոմս Լիօնի (գուր. կար.)	1247 50
Սուէզի ջրանցք	1835
Բուսական 5 0/0 1877ի (գ. Կ.)	99
Իտալական Ռանթ (գ. Կ.)	97
Եգիպտական միացեալ գոց	327 50
Սլաւոնական (արտաքին) (գ. Կ.)	60 1/8
Բրիտիշ Բէժիլ	392 50
5 0/0 Հելլենական (գ. Կ.)	344 37 1/2
Չէք Լոնտրայի վրայ	25 34

ԲԱՐԻԶ ԲԵԹ ԳՈՒՐՍ

Յունվար 15 ժ. 40, վ. 45

Ֆրանս. Ռանթ 4 1/2 0/0.....	109 67 1/2
Օսմանեան »	46 25
Եգիպտական միացեալ	327 50

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

3407 ՏԱՐԻ

1885 ՅՈՒՆՈՒԱՐ 5

ԹԻԻ 3751

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՆ»
Ի ԳԱԽԱՌՍ

Յարգելի Պ. Բ. Քէչեան, վերոյիշեալ խորագիրը կրող ընտիր տեսութեան մը մէջ, զոր հրատարակեց «Մասիս» շաբաթաթերթին, ցոյց կուտար այն շնորհ, զոր կ'ընէ հանրային բարոյականը թէ՛ մայրաքաղաքին և թէ՛ գաւառացի մէջ՝ ընդօրինակութեամբ յոռի կողմանց քաղաքակրթութեան։ Մեր յօդուածին նպատակն է հաստատութիւն մը տալ յարգելի հրատարակախօսի տեսութեան, որ մատնացոյց անելով տկար կողմերը հանրային բարոյականին, դրած է մատը բուն իսկ վէրքին վրայ, որ անտարակոյս անբուժելի պիտի դառնայ, եթէ այժմէն իսկ չը դարմանուի։

Երբեմն ուռաւհայ նշանաւոր գրող մը կը մեղադրէր Կ. Պոլսոյ դաղթական Հայերը, այն պատճառաւ որ նոքա ամեն տարի դէպ իրենց կը քաջեն բաղնիքիւ գաւառացիներ և հետեւաբար պատճառ կը լինին նոցա փճացման։ Նոյն գրողը կը յորդորէր մայրաքաղաքի Հայերը գաղթել գաւառները, որպէս զի գաւառացիք տեսնելով որ ոչ եւս աղգակիցներ ունին մայրաքաղաքին մէջ, չը քաջաբերուն և հետեւաբար չը հրապուրուին պանդխտութեան մէջ փնտռելու զոր ինչ հայրենիքը կը զանայ իրենց։ Թէ ո՛րչափ դործնական էր այս առաջարկը, մեզ չը վերաբերիր քննել այս գերազանցապէս նիւթական դարուն մէջ, ուր ոչ ոք հացի խնդիրը կը զոհէ ուրիշ ըս-

կզբանց։ Բայց թէ պանդխտութիւնը, մանաւանդ Կ. Պոլսոյ կամ Թիֆլիզի նման արեւելեան մայրաքաղաքացի մէջ, թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս կը փճացնէ գաւառացիները, սա այնչափ բացայայտ է, որ մեր կողմէն հաստատութիւնը գուցէ աւելորդ իսկ լինէր։

Քաղաքակրթութիւնը ունի անշուշտ իւր յոռի կողմերը, և անոնք, որք կ'իյնան մայրաքաղաքի մը ծովածովի ալեացի մէջ, չըջապատուած աննպաստ տարրերով, անծանօթ ազնիւ զգացումներու և բարձր գաղափարներու, երբեք կրթութեան նպաստաւոր տպաւորութիւն մը իրենց վրայ չ'իրած, երբեք չըմբռնած քաղաքակրթութեան բարձրագոյն սկզբունքը, ծագայի փայլէն շլանալու հակամէտ, անկարող դիմադրելու սաստկութեան ալեացի, կը քշուին նորա հոսանքներէն, պատրաստ գրկելու ամեն ինչ որ կը հանգիստի ճանքուն վրայ և անկանգնելի կերպիւ կը խորասուզուին խորութեան մէջ։ Սոքա եթէ երբեք դառնան հայրենիքը, են բոլորովին տարբեր այն օրէն, երբ հայրենի խրճիթէն առաջին անգամ ոտքերնին դուրս գրին, քալելու այն երկայն ճանքան, որ ի կորուստ միայն կը տանի։ Հայրենիքը իրենց համար, իրենք հայրենեաց համար փոխուած են։ Հայրենի տնակը նոցա կ'երեւի շատ նեղ և անարժան իրենց, որք տեսած են մայրաքաղաքի ապարանները։ Թէեւ երբեք նոցա մէջ չեն բնակած, այլ օտարացած են երկրի արուեստից ու սովորութեանց և անընդունակ ու է դործի։ մաճը՝ զոր իրենց ձեռքը յաջողութեամբ վարած էր այնչափ տարիներ, կը թռի նոցա շատ կոշտ կէնք և գաւառները, որք երկար տարիներ կարօտով

հալ ու մնալ իրենց վերադարձը կ'ստանան, կը թուին բոլորովին օտար : Ուրիշները թե-րեւս ճաշակի աշնուացում անուանեն վի-ճակ մը , որ սակայն է կատարեալ ստորնա-ցում ճաշակի , ճշմարիտ աղականութիւն բարոց : Ուրիշ անգամ թեթեւս առիթ ու-նենանք բացատրելու նիւթական անկումը , որ ուղղակի հետեւանքը կը լինի ճաշակի այսպիսի կարծեցեալ աղնուութեան մը . այժմ բացատրենք միայն միասը , զոր հանրային բարոյականը կը կրէ այդ վիճակէն :

Գծուար չէ երեւակայել զայս , երբ այ-րը 5-10 մինչեւ իսկ 20 տարի պանդխտե-լով մայրաքաղաքի մը մէջ , ուր ոտքը յա-ճախ ընդունակ է դայթելու , ուր չընապա-տող տարբերք երբէք չեն կարող վերականգ-նեցնել մէկը որ կ'իյնայ , ընտանիքէն , հայ-րենիքէն հեռու , կը փորձուի բնական պէտ-քի մը դոհացում որոնել այնպիսի վայրերու մէջ , որք երբէք չեն կրեր իրենց վրայ բա-րոյականութեան դրօշմը . և ի հայրենիս վե-րադարձին : ստորնացեալ ճաշակի մը հետ , բնութենէն պատժուած , իւր հետը կը տա-նի նաև խանդարեալ առողջութիւն մը , ար-դիւնք յոռի քաղաքակրթութեան մը : Եւ բա-ւական է որ ահարկու թշնամին միանգամ հնարը գտնէ երկրին մէջ արշաւելու , այլևս ոչինչ կարող է արգելուլ զայն . կ'արշաւէ անասնձ , տասլալելով ամեն խոչընդոտ , որ կարենայ երբէք իւր դէմը ելնել : Անշուշտ առանց պատճառի չէ որ մայրաքաղաքի մա-մուլը այս օրեր դրեթէ միահամուռ մատ-նացոյց կ'առնէ այն արշաւանաց վրայ , զոր գաղղկական ախտը կ'ընէ գաւառաց մէջ , առանց ցոյց տալու աղբիւրը , որ է նոյն իսկ մայրաքաղաքը : Այսպէս քաղաքակրթ-ութիւնը լիաբուռն կը վարձատրէ զմեզ իւր յոռեղոյն պարզեւնեւում , զմեզ որ աա-կաւին ոչինչ մաս չունինք նորա բարու-թիւններէն :

Եթէ երբէք պէտք կայ դիմել ապացոյ-ցի հաստատելու համար յոռեղոյն ժառան-գութիւնը պանդխտութեան , բաղդատու-թիւն մը միայն ընդ մէջ պանդխտող և ոչ-պանդխտող գաւառի մը բաւական է : Շատ հազուադիւր է գաւառ մը ի Հայաստան , որ չունենայ պանդխտներ , բայց այդ հազուադիւր գաւառները են հազուադիւր տիպարներ բարոյականութեան :

Պէտք չկայ հեռուոր գաւառաց մէջ փնտռելու օրինակը , որ մեզ չընապատող գաւառաց մէջ իսկ առատ է : Երկու դրացի գաւառակաց , նոյն իսկ երկու դրացի դիւ-ղերու մէջ կարելի է տեսնել խորին դանա-զանութիւն բարոց : Մինչ հանրային բա-րոյականը այնչափ վտանգաւոր կերպիւ վնաս-ուած է մեր չընապա թիւսն , Հայոց-ձոր , Գաւառ և այլ գաւառակաց մէջ , որք ամե-նէն աւելի պանդխտներ կը զրկեն ի Կ. Պոլիս , մինչ այդ անդերը կ'ընէ կարծես դար-ձած է հասարակաց ստացուած , ուր երկու ամուսինը հաւասարապէս աչք կը գոցեն ի-րարու անհաւատարմութեանց , անոնցմէ քիչ հեռու Նորասուլ , Շատախ , Մոկս , մանա-ւանդ նոցա այն դիւղերը , որք ու եւ է քա-ղաքի հետ քիչ յարաբերութիւն ունին , կ'ըն-ծայեն օրինակելի տիպար բարոյականու-թեան , զոր առաւել սքանչելի կերպիւ կ'ըն-ծայեն մեզ նաեւ մեր քրտդ հայրենակիցը , մանաւանդ նոցա աշխրէթ (վրանաբնակ) մա-սը : Սոցա մէջ անհաւատարմութեան ու եւ է դէպք սաստկութեամբ կը պատժուի և կը նախատուի խորին արհամարհանօք : Եւ ար-դիւնքը . արդիւնքը այն է որ մինչ մենք բը-ժշկական գիտութիւնը մեր կողմը ունենալով հանդերձ , տաքուկ սեւեակներէ չենք կարող դուրս ելնել , առանց մուշտակի չենք կարող ապրիլ , մինչ մեր դիւղացիք չեն կարող հեռա-նալ անասնանոցներու գարշահոտութենէն կամ թոնիրի թմբրութենէն , կարելի է տես-նել վրանաբնակներ , որք մերկ կուրծքով , թաղիքէ վերմակի մը ներքև անխռով կը նըն-ջեն բացօթեայ և առաւօտը , մինչ եթէ մենք լինէինք նոցա տեղը ապահովապէս սառած կը լինէինք , նոքա իրենց վերմակի վրայէն կը թօթափեն երկրորդ սպիտակ վերմակ մը , թանձր ձիւն մը : Ավրոտայեւան ախտեր՝ որք իրենց ծանրութեան ներքոյ կը ճնշեն զմեզ , անձանթ եւ նոցա . ախտեր՝ որք մեզ ալ ծանօթ չէին , մինչ յարաբերութեան մէջ չէինք յոռեղոյն քաղաքակրթութեան մը հետ : Եւ մինչ վրանային-վայրենի կենցաղը , զուրկ արդի դարու գիտութիւններէն , կ'ար-տադրէ հսկայ և ուժեղ մարդիկ , որոց մէջ կենաց չընալ սովորականէն աւելի երկար է , որք երբ ծերանան , կ'անակնին դուրս չեն ցցուեր , ինչ ենք մենք , որ ունինք մեր կողմը բժշկական գիտութիւնը , քաղաքա-

կըրթութիւնը, ամեն առաւելութիւնները արդի դարու, եթէ ոչ ակար, թոյլ արարածներ, որք կը խոնարհին թեթեւ հովի մ'առաջ, որպէս հորմահար տերեւ աշնան:

Անշուշտ ոչ որ չենթադրեր իմ խօսքերէն թէ պէտք է թողուլ քաղաքակիրթ միճակը, պէտք է լեռները քաշուիլ և վերադառնալ այն վիճակին, որպէս էինք շատ դարեր առաջ. ո՛չ, բայց պէտք է թողուլ կեղծ քաղաքակիրթութիւնը: Չը կայ ոչ մի բարիք անխառն, և մենք անմասն քաղաքակիրթութեան բարեաց, ժառանգած ենք միայն նորա յոռի կողմը: Մեր պանդուխտները վրոսանակ քաղաքակիրթութեան լոյսին, նորա միւրը միայն կը բերեն մեզ:

Ուրիշ գլխաւոր պատճառ մը, որ կը նըպաստէ մեզ շրջապատող զիւղերու մէջ հանրային բարուց ապականութեան, է նոցա անդործութիւնը: Յիրաւի մեր գիւղացիները, որք երկրագործութեան յատկացեալ 3-6 ամիսներու մէջ չարաչար կ'աշխատին, տարուան մնացեալ ամիսները կ'անցունեն կատարեալ անգործութեամբ: Բայց ներեցէ՛ք, դուցէ սխալ լինէր անգործութիւն անուանել, ինչ որ կը ներկայէ իրապէս շատ գործօն վիճակ մը: Արդարեւ դարչահոտ փառներու մէջ նստիլ, զիրար բամբասել, հայհոյել, եթէ այդեւէր են սպառել այդ ինչ գոյացեալ մեծաքանակ զինին, իրարու դըլուխը կոտորել, թեւը կամ ոտքերը խեղել և սպա զխմել դատարանաց, մեծաքանակ տուգանքները վճարել, ամիսներով դաս առնուլ բանտերու մէջ, այնպիսի վիճակ մը չէ՛ զոր ներելի է անգործութիւն անուանել: Այս է ահա բոլոր գործը, որով գիւղացիք կ'ըբաղին ձմեռը: Թէ հանրային բարոյակաւոր ռըչափ կը վնասի նկարագրեալ գրութեան, պէտք իսկ չկայ բացատրութեան:

Ուրիշ դիտողութիւն մ'ալ: Ամեն ինչ, նոյն իսկ մեր անկանոն վիճակագրութիւնք, ցոյց կուտան որ մեր գաւառին մէջ իդական սեռի թիւը նուազադոյն է քան արականին: Սակայն մանաւանդ այս վերջին տարիները օրիորդաց թիւը այնչափ ստուարացած է համեմատութեամբ ամուրի երիտասարդաց թուոյն, որ եթէ, ինչպէս կը լինէր առաջ, վերջերս հրաման չտրուէր ամուսնութեան կոյսի ընդ այրւոյ, այսօր շատ մը օրիորդներ պիտի մնային անամուսին: Մեզմէ տակաւին

քիչ տարիներ առաջ այս տեղ շատ հազուադիւտ էր 20 տարեկան օրիորդ մը, մինչ այսօր 24-30 տարեկան օրիորդներու թիւը պակաս չէ: Ինչպէս բովանդակ Հայաստանի նոյնպէս ալ մեր կողմի գիւղորէից մէջ սովորութիւն մը կայ, որով երիտասարդը իւր կինը կը դնէ ստակի արժէքով: Կարծենք թէ այս սովորութիւնը Հայաստանի մէջ մուտ դտած է իդական սեռի բնական նուազութեան պատճառաւ, սովորութիւն մը որ եթէ չէ ջնջուած ցարդ, սակայն օրիորդաց զինը եղած է շատ ստոր արժէքի, մինչ միւս կողմէ քաղաքին մէջ օրիորդաց դրամստութեան հաւատարմի կերպիւ բարձրացած է: Սորա պատճառը անշուշտ այն է որ մինչ ամուրի երիտասարդք պանդխտութեան մէջ զոհ կ'երթան զանազան ախտերու, կամ ոչ եւս կը վերադառնան հայրենիք, օրիորդք դուրս չեն ելներ երկրէն, և մինչ առաջնոց թիւը այլ և այլ պատճառներով կը նուազի, օրիորդաց թիւը նոյն կը մնայ: Ահա խնդիր մը, որ պէտք է դրաւէ մեր ուշադրութիւնը, զի շատ հաւանական է որ սա ալ հանրային բարոյականի համար մօտ օրէն ծանր նշանակութիւն ունենալ սկսի, եթէ արդէն չէ սկսած:

Ահա այս այլ և այլ պատճառներով հանրային բարոյականը ծանրապէս վտանգուած է մեր թէ՛ քաղաքիս և թէ՛ գիւղորէից մէջ: Փոխադարձ անհաւատարմութեան դէպքեր սովորական կը դառնան, ամուսնական վիճերը կը յաճախեն, ակրոյդ խեան ախտերը մեծագոյն ծաւալ մը կը ստանան, կինը տան, իսկ այրը պանդխտութեան մէջ կ'անբարոյակցանայնեն ամբողջ ընտանիք մը, և կարող էք հաւատալ, ուրեք ուրեք նոյն իսկ կրկնամուսնութեան դէպքեր կը պատահին: Այս ամենը երկրին համար կը պատրաստեն սոսկալի վիճ մը, որոյ եղբարաց վրայ արդէն կը գտնուինք: Ոչ որ կ'զգուշացնէ զմեզ վէին մէջ իյնալէ: Ազդային մամուլը պարտականութեան մեծադոյն մաս մը ունի զգուշացնելու ժողովուրդը անմասնական վիճակէ մը, զոր առաւել եւս կը դառնացունեն ինչ ինչ անասական զեղծփառք, որք յաջորդ յօդուածի մը նիւթը պիտի կազմեն:

Վան, 1884, դեկտ. 11

ՇԱՀԻՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

Խոստացած էինք տեղեկութիւններ տալ այժմեան երեւելի գրագիտաց առանին կենաց վրայ : Այսօր կը ներկայացնենք զԺիւլ Վէրն, որ արդէն ծանօթ է հասարակութեան իւր « յերկրէ ի լուսին » « Խորհրդաւոր կղզին » և « Աշխարհի շրջանն ութսուն օրուան մէջ » գրքերով, ի հայ թարգմանեալ : Պ. Ժիւլ Վէրն մասնաւոր եղանակ մ'ընտրած է իւրեն գրելու համար, այն է գիտութիւնը ներկայացնել վիպասանութեան ձևի տակ և այսպէս գիտական նիւթոց վրայ խօսիլ՝ առանց ձանձրացնելու զընթերցողն : Ինչպէս որ Վիլհելմ Նիւթընը իւր գրքերէ իւր խմբագրութեան գաղափարները պարզելու համար, նոյնպէս ալ Ժիւլ Վէրն, իւր հարած գրական նոր ճիւղին ներքեւ, կը յայտնէ իւր գիտական ուսումնասիրութիւնները : Ժիւլ Վէրն, իւր վիպասանութեանց այդ գիտական քննութիւնները գտնելու համար, իւր ընտանեաց հետ իւր յատուկ զբօսանաւով կը շահապարհորդէ գրեթէ միշտ աշխարհիս ամեն կողմերը. ուստի հետեւաբար իւր « առանին կեանքն » գրելու այնքան նիւթ չմատակարարել : Տեղեկութիւնները կը թարգմանենք Ժիւլ Զօշի « Բարեկցիք իրենց տան մէջ » անուն գրքէն :

Թէպէտ և շատ մը կենսագիրներ նկարագրած են զԺիւլ Վէրն յոտից ցգլուխ և տունէն մինչեւ իւր զբօսանաւն, բայց և այնպէս Ժիւլ Վէրն գրական ասպարէզին այն նշանաւոր անձերէն մէկն է որը ամենէն քիչ ճանչուած են հասարակութենէն . գէթ ի Փարիզ այսպէս է, որովհետեւ յԱմիէն, ուր կը բնակի, կ'ենթադրեմ թէ քաղաքին աստուածն լինի : Մինչդեռ « Տարբերակ Ուղեորներէն » հեղինակին անունը տարածած են ի սփիւռս աշխարհի, իւր անձնաւորութիւնը, քաջութիւնը կամաւոր մենութեան մը մէջ, մերթ ընդմիջաբայած կեանք մը վարելով, մերթ թաղուած առանին կենաց իտաղաղութեան մէջ, կը շատանայ փայլելով դաւառային փոքրիկ քաղաքի մը կամ Ուլիսանոսի անձայրածիր մենութեանց մէջ : Ասոր համար ոչ ոք կըրցած է մինչեւ այսօր այդ խիզախ աշխարհադէտին առանին կեանքն հետադադարել, և անոր յարածութիւն գէտն, որ անդադար կը տատանի լայնութեան տարբեր աստիճաններու ներքեւ, յուսահատութիւն կը պատճառէ քրոնիկադրոց, օրուան նո-

րութիւններուն այդ անխոնջ սրտառողաց :

Ի Փարիզ, Ժիւլ Վէրն ընկղմեալ նաւում մէկ բեկորին տխուր կենցաղը կը վարէ : Կոհակ մը գայն լուսնի ապարանը կը նետէ, ուր « ոտքի վրայ » բնակավայր մը կը հաստատէ : Տեղատուութենէն օգուտ կը քաղէ ընանալու համար : Այլաց ծախսեր կը յաւիըշտակեն դնա անկողնէն ելնելուն պէս և կը դաժալիժեն ի Փարիզ : Ի զուր կողմ մը կը վարձէ որ հանդարտի . սաջափը կընայ ընել որ Սէնը կ'անցնի և կ'երթայ խրիլ իւր հրատարակչաց՝ Հէմէլի կամ Հալթի քով : Հոն, ընդհանրապէս, քանի մը վայրկեան հանգիստ կ'առնու : Բայց կը հասնի թատրոն երթալու ժամն, ուր իրեն կ'սպասեն իւր թատերերգութեանց կրկնութիւններն : Յետոյ գնացքը կ'ուղղէ դէպ ի Սէն-Մարթէնի թատրոնը, որչափ կարելի է տատանելով Պուլվարներուն և արուեստից նուիրեալ արուարձաններուն մէջտեղ :

Երբ իրիկունը կը հասնի, Աստուած գիտէ թէ ո՞ր ցամաքը կը հանդիպի՝ պաշար պատրաստելու համար : Ստոյգը սա է որ անորոշ ժամերու մէջ Պուլվարներէն վեր կ'ենէ և կ'երթայ հանգիստ առնուլ Կրամօն փողոցի անկիւնը արուեստական փոքրիկ ծովափոր մը, զոր թաղապետութիւնը յօրինած է այդ կողմերը :

Այդ տեղ է որ իրիկուն մը անոր հանդիպեցայ, երբ հովն այնքան սաստիկաւորէր որ ստիպուեցայ հասարակաց տեղ մ'ապաստանիլ : Աւերդդ է ըսել թէ այն վայրն, որ մեր երկուքին ալ վայրկեանական ապաստան մը կ'ընծայէր, « Նոր Գրատուն »ն էր :

Երբ անդ գտայ զԺիւլ Վէրն, իրաւ որ սքանչացայ :

Իւր նուրբ դիմագծերով երեսով, որ սքանչալի վերջացած գորշագոյն մօքուքով մը շրջանակեալ է, իւր անկեղծ, համարձակ, համակրական դէմքով, իւր անվեհեր նայուածքով, նոյն իսկ այդ ոչ-բանաստեղծական ստորնայարկին մէջ երեւակայական դժուարութիւններն արհամարհել և անտեսանելի նաւուց հրամայել կը թուէր : Ահ, ի՞նչ տխուր տեսարան կը ներկայէր փողոցն, ուր վերջուց քամին կ'աւելբ Փարիզուհիներն, և այն պահուն հովն ո՞րքան ծաղրելի կը թուէր ինձ շրջագդեստներուն վրայ յարձակելով, մինչդեռ ոչինչ կ'արդէր

ղայն երթալ ծովուն մէջ մարտնչիլ փրկիրա-
դէպ ու լեռնակուտակ կոհակաց դէմ:

Բայց եթէ հովն ինձ մտիկ ընէր, տա-
կաւին պիտի անձրեւէր, և երկուքս ալ
բանտարկեալ պիտի մնայինք « Նոր Գրա-
տան » մէջ:

Աստ խոստովանութիւն մը պիտի ընեմ:
Նս կը պաշտեմ զԹիւլ Վէրն: Ինձ համար
նա կը ներկայացնէ վիպական հեղինակի տի-
պըն այնպէս որպէս կ'երեւակայէի լաւա-
գոյն ժամանակի մը մէջ, ուր միտքս, պատ-
րանքներով լի, թոյլ կուտար ինձ հաւատալ
վիպականի: Վէպի դիւցապն մինչեւ եղունգ-
ներուն ծայրը, մինչեւ իւր հեշտալի սրտա-
յուզութեամբ և եղերական զգացմամբ լի
կենաց փոքրագոյն միջադէպերուն մէջ, Թիւլ
Վէրն նոյն իսկ իտէպը կը կազմէ արկածա-
պատում վիպասանին, որ կը գրէ իբր տեն-
դոտ սիրահար վեհապանձ գեղեցկագիտու-
թեան, խօլ իրականութեան, մեծաշուք և
երբեմն ահարկու կերպնկալութեան, և այս
ամեն յատկութեանց միացնելով գիտնոյ մը
խորին փորձառութիւնն:

Դիտմամբ է որ զայն աստ կը ներկայա-
ցընեմ մտախոհ դիրքի մը մէջ: Իւր կեանքը
կը գրաւեն երազներ և հովի հարուածներ,
թէ՛ թանձրացեալ և թէ՛ վերացեալ խնա-
տով. փրաչունչ հովի հարուածներ և յան-
գըղնութեան հովի հարուածներ, որոցմով կը
նետուի անծանօթին ու անստոյգին արկած-
ներուն մէջ, որը միայն կարող են իւր մը-
տայոյդ, տաղնապող, անյագ բնութիւնն
հանդարտել: Փոխն ի փոխն ընկրմած գը-
րական յղացման և Ովկիանոսի անդունդնե-
րուն մէջ, իւր երազը վայրկեան մ'իսկ չընդ-
հատիր: Նս « Տարօրինակ ուղեւորութեանց »
հեղինակն ուրիշ կերպ չեմ երեւակայեր,
բայց միայն յոռն փոթորիկի ատեն, մտա-
ծելով այն սրտայոյդ կացութեան վրայ որ
իւր աչաց առջեւ կը պարզի, կայծակի եր-
կու հարուածոց մէջ տեղ, — ըստ որում
կայծակն աւելի լաւ կը լուսաւորէ կացու-
թիւնները քան ուղեղին բոլոր փայլակները:

Սակայն այս կերպ չէր երբ Լուի-լը-
Առան փողոցը Թալքսի երաժշտին սրահնե-
րուն մէջ եղերերգական բանաստեղծու-
թիւններ կը կարդար երիտասարդաց խմբի
մ'առջեւ, որք էին Բիէր Վէրսն, Ֆիլքսէն
Պուայէ, Լէրին (Փաթրէլ), Հէնրի տ'Իտ-

վիլ, Հինեաու, Կլեմթալ Նաոո, Շարլ Տը-
լիու, Լըվէլ, Լա: Իւր այդ ժամանակուան
բարեկամաց յիշատակները մեզ կը ներկայա-
ցընեն զնա իբր գեղադեմ տղայ մը, խարա-
եաշ ծնօտամօրուքով, ֆարիզ եկած իրաւա-
գիտութիւն սովորելու պատրուակաւ, այլ
իրօք դրականութեամբ դբադելու, և առ-
այժմ շատանալով խօսքեր յօրինելով իւր բա-
րեկամ Հինեաուի երաժշտութեանց համար:

Ասկա, եղերերգական բանաստեղծը կը
քաշուի փոխանակութեան գործակատարի
պատեանի մը մէջ, այս կերպիւ իւր զգայ-
նութիւնը խեղդելով թուանշաններու տակ
և մի միայն իւր նիւթական կեանքն ապա-
հովել մտածելով: Նիւթական կենաց հար-
կաւորութեանց համար տասն տարի կը նը-
ւիրէ, որմէ յետոյ վերստին կը գտնենք զնա
յԱմիէն, տէր սիրուն ընտանեաց մը, մեծ
հարստութեան մը, զբօսանաւի մը, և յիշո-
ղութիւնը խճողեալ ուղեւորութեան յիշա-
տակներով և գիտական ընթերցանութեամբ,
վերջապէս բիւր անհրաժեշտ պայմաններով,
որը հարկաւոր են տարօրինակ ուղեւորու-
թիւններ գրելու համար:

1862ին էր որ հրատարակեց իւր սոյնօ-
րինակ առաջին երկն, Հինգ շաբաթներ յօդա-
պարէի, որ ճշմարիտ փորձ մ'եղաւ: Ի չգոյժ
օգտավարկաց ուղղութեան, գտած էր իւր
դրական կոչման ուղղութիւնը: Ճանրան
բացուած էր:

Նաւարկութեան սրտաշարժ պատահար-
ներն առիթ սուին իրեն գրել Արեւիք և
ապէս Հաբասի գիրքը: Որովհետեւ ինք ծովը
կը սիրէր, իւր գրքերուն մէջ ամենուրեք
ծով գրաւ, վրան յաւելլով երբեմն ինքնա-
գիւտ և երեւակայական հանգամանք-
ներ, ինչպէս Քառն հաղար ծղոն ծովերս Կալ
գրքին մէջ:

Ո՛վ չգիտէ թէ մեծ իրերը շատ անգամ
փոքր բաներէ ծագում կ'առնուն: Թիւլ Վէրն
երբեք ծովէն չբռնուիր: Իւր ստամոքսն
սքանչեւապէս կը գիմնարէ դատարկութեան:
Առանց այս փոքրիկ իրողութեան, այսօր
չպիտի ունենայինք այն գիտական վիպա-
սանութիւններն, ուր ծովն և իւր սրտա-
յուզութիւնը այնքան մեծ դեր մը կը խա-
ղան:

Իւր աշխատելու եղանակին գալով, այն
միայն գիտեմ զոր ինք յօժարակամ ըսած է:

Երբէք չտախառնիր ուղեւորները միջոցին : Ծանօթութիւններ կը հաւաքէ առանց գիտնալու, և իւր ուղեւորութեանց տպաւորութիւնները կը գործածէ միայն իւր վիպական երեւակայութիւնը մտրակելու համար, որ ըստ իւր հաճոյս կը փոխակերպէ իւր յիշողութեան իրական կամ մտացածին պատկերները : Իւր բացայայտ նպատակն է, տարին երկու վէպերով, ամբողջ աշխարհը խուզարկել, առանց անծանօթ և կոյս վայր մը թողլու : Ասոր համար է որ իւր աշխատութեան սենեկին մէջ հարթադռնաւ մ'ունի որ պատէն չբաժնուիր : Այդ հարթադռնաւն այժմ կարմիր, կապոյտ եւ գծերով դժուած է, որք ժիւլ Վէրնի ցոյց կուտան այն տեղերն ուսկէց անցած է, այն երկիրներն որք այլ եւս գաղտնիք չունին իւր գրչին համար : Նիթէ նոր վէպ մը գրելու ձեռնարկէ, աշխարհացոյց քարտէսին վրայ կը փնտռէ գծերէ վերծ երկիր մը և նոր ուղին ընտրելէ յետոյ, անդ կը հաստատէ իւր խուզարկուի վրանն, որ կարծեմ կը ներկայացուի գնդասեղով մը : Բայց դործի ձեռնարկելէ առաջ, խղճի մտօք կը կարդայ խնդրոյ նիւթ եղած երկրին նկատմամբ ինչ որ հրատարակուած է, որպէս զի լաւ թափանցէ նիւթին սեփական բոլոր բնական պարագայները :

Փութանք ըսել սակայն թէ եթէ գիտական մտահոգութիւն կը նշմարուի ժիւլ Վէրնի գրքերուն մէջ, այդ մտահոգութիւն միմիայն հեղինակին համար գոյութիւն ունի : Ընթերցողին համար, գիտութեան խաղացած դերն աւելի հրապոյր մ'է, որովհետեւ դա հրաշալի նորութիւն մ'է, որ հեշտութեամբ մտցնել կուտայ գաղտնախորհուրդ վէպերու հին հանգոյցները : Գիտութիւնն հրաշալւոյն սահմանակից է այն անհուն հորիզոններով զորս կը բանայ անծանօթին և իրաց գաղտնիքներուն վրայ, և ցնորքի կը մօտենայ այն անհեղաճ ենթացողութեամբ, զորս կը ծնուցանէ այն ուղեղներուն մէջ որք խելամոռելու զօրութիւն ունին : Այդ հրաշալին, այդ ցնորքն է որ տարրը կը կադմեն այն շահեկանութեան զոր ժիւլ Վէրն մոռած է վիպասանութեան մէջ :

Իտկար Բօէ հետեւեալ մտածումն ունեցած է. « Տհաճութիւն կը պատճառեն ինձ այն իրերն զորս չեմ կարող մեկնել » : Այդ

անհաճոյ զգացման դէմ է որ ժիւլ Վէրն կ'օգնէ մեզ կռուելու : Մարդկային հասկացողութենէն անդին կը տանի զմեզ և այնքան հեռու կը մըլէ այժմեան գիտութեան սահմաններն որ թոյլ կուտայ մեզ ենթացուիլ, նոյն խի երբ կը դադրինք հասկնալ :

Ուստի Խիլ Զոլա անիրաւ է երբ կը քննադատէ ժիւլ Վէրնի Գիտական վէպերն և անոնց բազմաթիւ տպադրութիւնները՝ Ուլիսէ Սէն-Բէրնարդին ընթերցողաց ուշագրութիւնն հրաւիրելով սա իրողութեան վրայ թէ օրացոյցներն և ազօթագրքերն ալ հարկւր հազար օրինակ կը ծախուին, և թէ սակայն ո'չ այդ օրացոյցներն, ո'չ ալ Գիտական վէպերն յարաբերութիւն ունին արուեստի հետ :

Ի՛նչ, ի՛նչ, դատաւարտե՛լ ժիւլ Վէրնի վէպերն յանուն արուեստի, անոր համար որ գիտութիւնն անոնց գլխաւոր տարրը կը կազմէ : Նէ այն մասնաւոր երգիծական զուարթութիւնն զոր ժիւլ Վէրնի ոճը կուտայ այն գիտական տարօրինակութեանց զորս կը սփռէ իւր գրքերուն մէջ, այն նոր ձեւերուն, որոց ներքեւ այդ տարօրինակութիւնք ցոյց կուտան մեզ իրերը, այն միշտ նորանշան կացութեանց յորս կը դընեն անձնաւորութիւնները : Այն խօսակցան հորիզոններն, այն ամեն թանկագին յատկութիւններն որք ժիւլ Վէրնի գրական սեւը տիեզերական սեւ մ'ըրած են, այն աստիճան որ իւր վէպերը ամենախոնարհ, ամենամոտ միջավայրերը թափանցած են, նոյն խի երիտասարդ կալանաւորերոց բանտերու մէջ, ինչպէս և կը գտնուին ամեն գրագէտի մատենադարանի մէջ. միթէ այս նոր տարրերը կրնան համեմատուիլ այն ստորին արուեստին հետ, որ օրացոյցներ կը շինէ : Օ՛ն անդր : Այս մասին, ժիւլ Վէրն իրաւունք ունի պատասխանել Խիլ Զոլայի թէ աւելի խղճամիտ չէ երբ իւր պաշտօնակիցները կ'ուսումնասիրէ, քան երբ շարունակելի վէպեր կը գրէ, որոց գիտական հիւստեածը չպիտի դիմադրէր եկող առաջին բնախօսին քննութեան :

Թարգմ.

ԺԻՒԼ ՆՕԾ

Լ. Բ.

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Երկուք ու կէս տարի Տաւրոսի շրջակայքը դառնուելով՝ ստեղծ չընդադալութեանց մէջ էի ու առիթ ունեցայ տեսնելու բայի Տաւրոսէ նաեւ զանազան քաղաքներ ու գիւղաքաղաքներ։ Այս ճանապարհորդութեանց առթիւ կազմած յիշատակարանէս ինչ ինչ « ճանապարհորդական նկատողութիւններ » հրատարակութեան տալով՝ կը յուսամ ընթերցողաց օգտակար ծառայութիւն մը մատուցանել։

— Ամենուրեք երբ որ գիւղի մը հանդիպիք, գիւրաւ կրնաք ճանչնալ անոր բնակչաց ինչ ազգէ լինին ո՛չ միայն աղօթատեղւոյն արտաքին տեսքէն, այլ նկատելով նորա չէն կամ անչէն, լաւ կամ յոռի մշակութած ըլլալն։ Առաջին վիճակի մէջ եղողներն Հայոց և երկրորդները Քրդաց կը վերաբերին։

— Երբ գիւղ մը զուտ հայ բնակիչ ունի, հոն ազատ ու բաց են կանայք. իսկ եթէ խառն լինի, արգելափակ ու ծածկեալ կը մնան նոքա։ Այս երեւոյթը կը ցուցունէ որ հայկական նախնի կենաց մէջ կանայք հաւասար ազատութիւն կը վայելէին իրենց արանց հետ՝ ի մասին արտաքս երեւնալու։

— Հովիտներու մէջ ընդհանրապէս Քրդաց գիւղերը լեռանց սարաւանդներու կամ ստորոտներու վրայ շինուած են, իսկ Հայոցը՝ դաշտին մէջտեղերը։

— Ուր որ Քրդեր նուազ մղեւանդ են կրօնապէս, նուազ թշնամի են Հայոց։ Իսկ Թուրքաց ջերմ հաւատացեալներն աւելի բարեմոյն են։

— Ի Բաղու իւր բոլոր գիւղերով տիրող գոյնն է կապոյտ, ի Քարբերդ սեւը, ի Վասպուրական կարմիրը և ի Տուրուբերան խաւըն։

— Չարսանճաղի մէջ կանայք ընդհանրապէս շուէր կը հագնին, իսկ սյրեր պճրդնաւոր էնթարի։ Քարբերդու գիւղերու մէջ ալ կանանց շուէր հագնելու սովորութիւն կայ։ Այս երեւոյթը անհնար է տեսնել ի Վաս-

պուրական և յայլ դաւառն։ Շաւշարներու տեսակներն ալ զանազան են։

— Զորքորդ Հայոց ու բարձր Հայոց գիւղերն աւելի գեղեցկաչէն ու ճաշակաւոր են, բնակչաց ճաշակն ալ հաւասարապէս աւելի զարգացած է քան Վասպուրականի, Տուրուբերանի և Աղճնեաց գիւղերուն։ Քանոնոնի նկարագրած հայ գիւղերու հետքերը ի Տուրուբերան պայծառ կը տեսնուին։

— Ժամ 10 ի տոհմները երբ գիւղի մը բովէ անցած ատեն հարցնէք այն գիւղի բնակչաց միոյն թէ առաջիկայ գիւղը ո՞ր չափ հեռու է, կը պատասխանէ միշտ երեք անգամ պակաս քան իսկականն, որպէս զի չօթեւանիք նոյն գիւղը և մեկնիք ի միւս գիւղն թէպէտ կէս գիւղերին միայն հասնիլ կարենաք, իրեն հոգը չէ։

Նոյնպէս միշտ կրկին հաշուել պէտք է տեղւոյ մը հեռաւորութիւնը երբ գիւղացի մ'է նորա չափը ծանուցանող։ Եթէ Ժամացոյց չունենանուն հետեւանք համարինք նոցա սխալմունքը, բայց ինչ պտտճառաւ երբէք աւելի չեն ըսեր իսկականէն ու միշտ պակաս կը ցուցնեն։

— Հայու մը համար հայ գիւղի մէջ աւելի նեղութիւն է օթեւանիլ քան բուրդ գիւղի մէջ, որովհետեւ հայ գիւղացիք բռնութեամբ միայն կը հոգան անցորդաց պէտքերը և զի դիտեն թէ հայ ճանբորդը բռնութիւն չբանեցներ, կը զլնան անոր ինչ որ ուզէ, թէեւ վճարել փութայ գինը։ Իսկ Քուրդերը ընդհակառակն աւելի լաւ կը վարուին հայ ճանբորդին հետ, բայց դողնալու ամեն ջանք չեն խնայեր անկից ինչ որ կարենան։

— Եթէ ճանբորդ մը ուղղակի Քուրդի մը տան դուռը իջնայ վստահաբար, թէպէտ ծանօթ չլինի անոր, մեծ սիրով կ'ընդունուի և պատիւ իսկ կը համարի հիւրընկալել զայն։ Իսկ Հայք չեն ընդունիր ո՛ր և է ճանբորդ, մինչեւ գէթ թեթեւ ծանօթութիւններ չստանան նորա ո՛վ լինելուն վրայ։

— Ո՛ր գիւղին մէջ կամ չընդադալքը որ վանք կայ, այն վանքին յատկացեալ են նոյն տեղւոյ ամենէն ընտիր հողերն ու պարագներն։

— Գիւղի մը, կամ քաղաքի մը, կամ գիւղաքաղաքի մը մէջ քանի՜ եկեղեցի որ կայ, այնքան կուսակցութեանց բաժնուած են

ժողովուրդներն : Այս երեւոյթը դիտելով մարդ՝ կը փորձուի կարծել թէ լաւ է որ ամեն դիւզ, դիւզաբաղաբ կամ քաղաք միայն մէկ եկեղեցի ունենայ, որպէս զի փոքր ինչ միութիւն ունենայ և նուազ երկպառակեալ լինի : — Նոյնպէս մասնաւոր կողմնակցութեանց կամ թաղային յոյժ խտրական բաժանմանց պատճառ է տեղւոյ մը մէջ գետի, գետակի կամ վտակի մը գոյութիւնը : Քղի-Գասապա և Ալիւր դիւզը գերազանց օրինակ են ասոր :

— Մուշ թէպէտ աւելի մօտ է Վանայ, բայց լեւոյի և սովորութեանց նմանութիւն բնաւ չունի Վանայ հետ, իսկ Դ. Հայքը (Քարբերդ և Նըջակայքը) Վանէն խիստ հեռու գտնուելով հանդերձ աւելի նմանութիւններ ունին :

— Մշոյ մէջ դիւզացի երիտասարդներ սովորութիւն ունին երբեմն խիստ երկայն մաղ ձգելու իրենց դիւսոց վրայ : Արդեօք այս երեւոյթը, որ չտեսնուիր բնաւ ուրիշ գաւառներու մէջ, շարունակութիւն կրնայ համարուիլ Ձինացոց սովորութեանը, յորոց կը սերէին Մամիկոնեանը, նախահարը արդի Մշեցոց :

— Որպէս արդային պատմութեան մէջ կը տեսնենք, Մամիկոնեանը միշտ սէդ և խիզախ բնաւորութիւն ունէին : Այժմ եւս Մշեցիք այդպէս են : Իսկ Վասպուրականցիք, սերունդ Արծրունեաց, աւելի խորագետ են քան խորխոս :

— Հետեւեալ վանքերը հետեւեալ դաւառաց ամենամեծ ու առաջին ուխտատեղիք են. Բարձրահայեաց վանքը յԱրզնի ի սահման Տիգրանակերտու, Քաղցրահայեաց ի Բալու, Չարչարանաց յՆըզնկա, Ս. Բարթուղիմէոս յԱղբակ (Հէքքեարի), Աղթամար կամ Նարեկ ի Ուտունիս, Ս. Կարապետ ի Տարօն, Ս. Կիրակոս ի Քղի, Ոսկի-Աւետարան ի Չարսանձագ, Տիրամայր ի Դնունիս (Վան քաղքի հիւսիսակողման Թէմուր ըստուած հովիտը), Անդղայ վանք ի Հայոց Ձոր, Վարդը ի Վանոտալ (քաղաք և այգետան սահմանախակեալ), Ս. Դանիլ ի Խորխոսունիս (Պուլանդը), և և :

— Չանաղան անունով դիւզեր կան որ բազում դաւառաց մէջ միանգամայն կը գտնուին, զորօրինակ, Նոր դիւզ, Բերդակ, Թիլ և և. իսկ կան անուանք որ յատուկ են,

զորօրինակ, Ալիւր ի Վան, Հաւա ի Բալու, Յրօնք ի Տարօն, Դարման ի Քղի, Բէրչէնձ ի Քարբերդ, Կօտառիձ ի Չարսանձագ, և և :

— Չարսանձագի մէջ ընդունելութիւն անցեալը մօն կը վերջաւորի, ի Վան և շատ տեղեր ունի, ինչպէս թրջաձ, թրջման, թըրջուի, կամ, կոտրաձ, կոտրման, կոտրուի և և. ի Վասպուրական ալ կը հնչուի է. իսկ ի Դ. Հայս է կը հնչուի ալ. զորօրինակ հայք, մայք, հէք, ժք. կանէ, կանայ, կը նեղէ, կը նեղայ և և : Ի Չմկաձագ, Ելեպոտ, Ելեպոտ և այլն այսպիսի առաջին դէմքի նմանաձայն խոնարհմունք երկրորդ դէմքի նշանակութիւն ունին, զորօրինակ վերոյիշեալ բառերն կը նշանակէն Ելեք, Ելեցէք : Ի Վան և ի Բալու է Երկրորդ դէմք երրորդի խմբատունի, և « Երբ » ն կը նշանակէ « տուաւ », բայց Վանայ մէջ է տառն քիչ մը է տառին պէս հնչելով. նաեւ ի Վան հ տառն է կը հնչուի, զորօրինակ հաց, խաց :

Եզրուաբանական այսպիսի հետազօտութիւններ խիստ ընդարձակ են : Մտադիր եմ զանոնք յատուկ յօդուածով մը ներկայացընել :

— Դաշտային բազմաթիւ դիւզերու մօտ արուեստական հողաբլուրներ կանգնուած կան, գլխաւորապէս Թիլ կոչուածներու մօտ. այդ կը ցուցնէ որ նոցա վրայ կուտուններ կամ լոկ կուռքեր հաստատուած են եղեր, երբ նախ քան զբրիտունէութիւն « ի բարձունս կամ ի բարձանց » կ'աղօթէր ժողովուրդն :

— Հայաստանի քաղաքները մեծ մասամբ շինուած են կա՛մ լեռանց կիրճերու մօտ, կա՛մ ստորոտը և կա՛մ գետի մը եզերքը : Միմիայն Քարբերդը ճիշդ լեռան գագաթին վրայ է և այդ իր տեսակին մէջ մէկ հատիկ է : Դաշտային մեծ հովտաց մէջի քաղաքներն ալ, թէպէտ թուով քիչ, առ հարկի հարթ մակերեւոյթի վրայ շինուած են : Վան, Նրիւզա, Կարին վերջին տեսակէն են : Բաղէշ, Մուշ, Բալու, Ակն, Արաբկիր, Բաբերդ և և. առաջին կարգին կը պատկանին : Դաշտայիններն աւելի պարիսպ ունին քան լեռնայինները :

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

ՆՈՐԱՎԷՊ

ՆԱԲՈՒԼԻՆ ՍՈՒՍՋԻՆ ԿԱՅՍԵՐ
ՄԷԿ ՎՐԻԺՍՈՒԹԻԻՆԸ

Մի՛ վախճաք, սիրելի ընթերցողուհի, ո՛չ պաշարմանց և ո՛չ ալ ճակատամարտներու վրայ ախտի խօսիմք, այլ պարզասկզբ յոյժ խաղաղիկ վրէժի մը վրայ զոր Նաբոլէոն Ա. կայսրն առաւ իւր ժամանակուան դեղանի կնոջմէ մը, որ զինքը վերաւորելու անխոհմտութիւնը գործած էր :

Այդ հրապուրիչ արարածը կը կոչուէր Էթիէնէթ Պուրկուան և Գոմէտի-Ֆրանսէզ թատրոնին մէջ կը փայլէր իբր աստղ լուսաշողով . այս բան անպարծութիւն և հըպարտութիւն մը կուտար իրեն, որուն վրայ դէթ անգամ մը զղջաց, ինչպէս ցոյց կուտայ հետեւեալ պատմութիւնը :

Նաբոլէոն բնաւ անտարբեր աչօք չէր տեսներ հրաշագեղ դերասանուհին . բայց մինչեւ ցայնժամ լուսթիւն սկսած էր և իւր նորածին քմահաճոյքն հազիւ ի հանդէս բերած էր քանի մը հանձարեղ խօսքերով, որով հեղհած էր օրիորդ Պուրկուանի և իւր ներքին գործոց նախարարին սէրը : Տարակոյս չկայ թէ Կիսաստուածը (Նաբոլէոն) բնաւ առիթ չէր տուած որ Շաբլալ իրմէ նախանձելու պատիւն ունենար . սակայն իրեն անհաճոյ կը թուէր, թերեւս յանդէսս իւր, որ ուրիշ մը վայելէր շնորհներն կնոջ մը, զոր կը բարձրացնէր մինչեւ իւր փառքանաց մեծութեան :

Օր մը յորում նախարարն իւր վեհասպետին կը ներկայացնէր չեմ գիտեր ի՞նչ ծրագիր,

— Հա՛, աղէկ միտքս ինկաւ, ըսաւ յանկարծ Նաբոլէոն, ի՞նչպէս է օրիորդ Պուրկուան :

Եւ տեսնելով որ Շաբլալ կը խռովէր ու շփոթէր,

— Օ՛հ, յարեց, ինձմէ բան մի պահեր : Անկեղծաբար խօսելով, կը հաւատա՞ք նորա հաւատարմութեան :

— Անտարակոյս, վեհափառ տէր . կը յուսամ կամ մանաւանդ ապահով եմ թէ օրիորդ Պուրկուան հակառակորդ մը չյարուցաներ ինձ դէմ :

— Խօսքերնիդ մի՛ փոխէք, կը յուսա՞ք առ կը բաւէ . գիտես որ կանայք, անյողդողդութեան տեսակետով, մեծ բան մը չեն արժէր, մանաւանդ դերասանուհիք :

— Ձեր վեհափառութիւնը յոյժ քիչ ներողամիտ է, ըսաւ նախարարն, և սակայն բացառութիւն մը կը խնդրեմ ի մասին . . .

— Ձեր կուռքին, այնպէս չէ՞. է՛հ, խեղճ Շաբլալ իմ, կը վստահեցնեմ քեզ թէ օրիորդ Պուրկուան միւսներէն նուազ նենդամիտ և նուազ անյողդողդ չէ : Ես զայդ անձամբ ապացուցանելու հոգը կ'ստանձնէի, եթէ պետութեանս գործերը թողլ տային : Բայց աւելի լուրջ բաներով զբաղինք : Մէկ կողմ թողուք, եթէ կը հաճիք, այդ ոչընչաբանութիւններն և մեր գործին դառնանք :

Կայսրն, յայնժամ գտնելով իւր պաղարիւնութիւնն, ունին դրաւ նախարարին տեղեկագրոյն :

Խորհրդակցութենէն յետոյ, Շաբլալ իւր սիրելի Էթիէնէթին տունը գնաց զոր յոյժ զբաղեալ գտաւ : Էթիէնէթ խոստացած էր հետեւեալ օր խաղալ ի Մալմէլոն և իւր հագուստին պատրաստութիւնը չարաչար աշխատութիւն կը պատճառէին իրեն :

Կայսերական ընտանեաց վրայ խօսելու յարմար ժամանակն էր : Այդ նիւթին վրայ ա՛յնքան երկարօրէն խօսեցան որ քառօրէ մը յետոյ օրիորդ Պուրկուան գիտէր Կայսեր և Շաբլալի անսակցութիւնն և այն անպատուաբեր խօսքերն զորս Կայսրն ըսած էր իւր մասին :

— Ծանծաղամբ՛որդ, գոչեց՝ բողբալ ի զայրոյթ կատաղութեան, ամենայեւորն արարածոց պէս կը վարուի մեզ հետ, և կ'երեւակայէ թէ երջանիկ ախտի լինէի իւր թաշկինակը վերցնելով՝ եթէ բարեհաճէր ինձ նետել զայն : Թող յասպարէզ գոյ այդ դեղագէտ Կայսրն, և թող տեսնէ թէ գործը որո՞ւ հետ է : Բնաւ կարեւորութիւն չեմ տար այդ Կեսարին . գալով իւր Մալմէլոնի թատրոնին, թող չսպասեն ինձ վաղն իրիկուն :

— Էթիէնէթ, ըսաւ Շաբլալ անհանդուրժութեամբ, կը տեսնեմ որ վերջը չես մտածեր : Ապստամբի՛լ Կայսեր դէմ . Կայսրուհւոյն առջեւ ելնել չուղե՛լ, երբ յանձնառու եղած ես . խորհէ՛ որ իւր հրաւերն հրաման մ'է, բացորոշ հրաման մը :

— Փարը գլխուն , բնաւ հոգս չէ : Եւ երդում ըրի և խօսքս խօսք է :

Նախարարն ամեն միջոց ի դործ դրաւ իւր տարիուէին համոզելու համար : Ո՛չ երկիւզ , ո՛չ աղաչանք կրցան փոխել տալանոր որոշումը : Օրիորդ Պուրկուան պջրասիրութեան յամառութիւնն ունէր , և կը կարծէր թէ գեղեցկութենէն ընդունած իւր մականը կը գերադանցէր բոլոր միւս մականները : Պոնաբարթ հակառակն հաստատեց՝ իւր անհնազանդութեան հետեւեալ օրը ձերբազաւել տալով զնա և զրկելով ի Սէնթ-Բէլլափի մտածել իւր յաւակնութեանց ոչնչութեան վրայ :

Այս վրէժը լուծելէ յետոյ , կը մնար ուրիշ մը պատրաստել , որովհետեւ Էթիէնէթի երդումը մինչեւ Կայսեր ականջն հասած էր , և Նաբոլէոն որոշած էր նուաճել կինն , ինչպէս նուաճած էր դերասանուհին :

Աստ դործը նուազ դիւրին էր , որովհետեւ օրիորդ Պուրկուանի բարեյօժարութիւնն անհրաժեշտ կը լինէր , և իւր բիրտ բանտարկութեան պատճառաւ յոյժ քիչ տըրամազիր էր յօժարելու : Բայց խոչընդոտը կը հրապուրէին բռնաւորը , փոխանակ վշատեցնելու : Իւր վրիժառութեան յատկապիժը պատրաստեց , և անոր դործադրութիւնն ապահովելու համար , ժամանակին առաջին գիւտանաղէտին հետ միանալու գերադանց դադարաւորն յղացաւ :

Գեղեցիկ օր մը , Փարսան հրաշագեղ դերասանուհւոյն տունը ներկայացաւ , և իբր թէ իւր իսկ շահուն համար դործէր , Էթիէնէթը ողորդէր փաղաքուշ խոստումներով և կնահածոյ դործերով :

Երբ գետինը բաւական պատրաստուեցաւ , մեծ սենեկապանը քանի մը զրուստական խօսքեր ըսաւ Կայսեր մասին . խօսեցաւ անոր հանձարոյն և փառաց վրայ , յետոյ խօսքը թատեր վրայ դարձնելով՝ ցոյց տուաւ թէ գերասանուհիք ի՞նչ ջանքեր կ'ընէին Կայսրէն ակնարկ մը մտաւոր համար :

— Ներեցէ՛ք , վսեմափայլ տէր , ընդ միջեց Էթիէնէթ , իմ ընկերակցութեանցս յիմարութիւնները բնաւ չեն վերաբերիր ինձ և ես բնաւ փափաք չունիմ զայնս ջատագովելու : Գալով ինձ , ես կը հաստատեմ թէ Գորսիքացւոյդ ո՛չ ակնարկներն և ո՛չ ալ անձը հրապուրած են զիս :

— Ես համոզուած եմ այդ մասին : Նոյն իսկ ձեր անտարբերութեան պէտք է վերադրել ձեր նկատմամբ Կայսեր ունեցած դժբաղդը զգացումները :

— Օ՛հ , անհաւատարի է այդ , և Ն. Վեհափառութիւնը մարդիկ սիրելու տարօրինակ եղանակ մ'ունի : Բանտ կը զրկէ զայնս իբր պարզ չարագործներ :

— Պատճառն այն է թէ Պոնաբարթ նախանձոտ է , նախանձը կոյր է և թէ ձեզ պատժելով , ուրիշի մը տրիւր պատժած եղաւ :

— Ո՞ր ուրիշը , ի՞նչ տրիւր : Բացատրեցէ՛ք , Վսեմափայլ տէր :

— Է՛ , ճշգրիտ արմատ , Շարթալի՝ ըսուերջանիկ յաղթականիդ՝ տրիւր : Բայց խօսակցութիւնը փոխենք , եթէ կը հոժիք : Ինձ չվերաբերիր պաշտպանել դատ մը զոր ինձ յանձնած չեն :

Փարսան դատեց թէ բաւական խօսած էր առաջին անգամուան համար , և իբր նրբամիտ քաղաքագէտ՝ արձակ ասպարէզ կը թողուր օրիորդ Պուրկուանի խոխմանց :

Յաջորդ տեսակցութեան մէջ , այլ եւս Կայսեր խօսքը չեղաւ , միմիայն մեծ սենեկապետը «դիպուածաւ» ծափոյց Էթիէնէթի թէ օրիորդ Մարս ի Մալմէզոն կանչուած էր Լը Պարպէ քը Սէվէլ թատերախաղին մէջ Ռոպինի դերը խաղալու համար :

— Ա՛հ , ըսաւ օրիորդ Պուրկուան զգալէս սրանեղելով , օրիորդ Մարս ընդունեց :

— Ինչո՞ւ չէ : Ռոպինի հանդերձանքն սքանչելապէս կը վայելէ իրեն , և ինք չդժկամակիր արքունեաց առջեւ փորձելով զայն :

Ներկայացման հետեւեալ օրը , Փարսան Էթիէնէթի կը հաղորդէր իւր յաջորդին յաջորդութիւնը : Կայսրն , հիացած , հրամայած էր որ վերստին ներկայացնեն թատերախաղը՝ նորէն սքանչանալու համար դեղանի Ռոպինի վրայ : Յայտնի կ'երեւէր որ օրիորդ Մարս մեծ յարգ կը դնէր : Էթիէնէթի շրթանց վրայ զ զոհութեան նշանակիչ ժպիտ մը սաւառնեցաւ :

Բայց աւելի դէշ եղաւ երբ մեր դերասանուհին իմացաւ , իւր յարասեւ այցելուէն , այն յառաջդ իմութիւններն զորս օրիորդ Մարս կ'ընէր իւր վեհաշուք պաշտպանաց քով :

— Ձեր բարեկամուհին, ըստ թաղրան, Աստուծոյ դէր կը կատարէ ի Մարմէզոն եթէ փառասէր լինէր, Կայսրն իւր ստից առջեւ կը տեսնէր: Ն. Վեհափառութիւնը միայն անոր աչաց վրայ կ'երդնու:

— Իրա՛ւ, ըստ ծաղրելով Եթիէնէթ, « բարեկամուհին » կակղացուցած է այդ պղնձեայ սիրտը: Անկարելի հրաշք մը կարծէի զայդ:

— Պա՛հ, ըստ դիւանադէտն, հիացած տեսնելով որ օրիորդ Պուրկուան կ'սկսէր հետաքրքրուիլ այդ զործով, դուք ամեն մարդէ աղէկ դիտէք թէ առիկա կարելի է:

— Նո՛ւ. ի՞նչպէս սկիտի գիտնամ:

— Որովհետեւ դեռ ամիս մ'առաջ Կայսրը կը խենդենար ձեր վրայ:

— Ի՞մ վրայ. ո՛հ, վսեմափայլ տէր, կը ծաղրէ՞ք զիս, ըստ Եթիէնէթ հասլտական շարժումներով: Թերեւս, եթէ միջոցներ ձեռք առնէի... Բայց փորձառութիւնը բընաւ չքաջալերեց զիս:

— Այդ իսկ է ձեր սխալը, դեղանի՛ դերասանուհին. որովհետեւ այն ատեն կը տիրապետէր Պոնաբարթի մտաց վրայ և անոր պաշտպանութեամբ ամենակարող կը լինէր ի Գոմէտի-Ֆրանէզ:

— Ուրեմն կը կարծէ՞ք որ այսօր, եթէ խելքիս փչէ այդ տեղւոյն համար միջեւը, շատ դժուարաւ կը յաջողիմ:

— Այսօր, օրիորդ Մարսի նորածագ աստղը մթնոց ձեր փայլը:

— Տրամադիր չէք երեւիր կնահաճոյութեան, վսեմափայլ տէր:

— Խնդիրն իմ վրայ չէ, որ ձեր զարմացողն եմ, այլ Նաբոլէոնի վրայ: Տես, կ'ուզէ՞ք գիտնալ թէ երէկ ինչ կ'ըսէր օրիորդ Մարսի իմ առջեւ:

— Յօժարակամ:

— Թերեւս շատ անպատեհ դռնէք զիս:

— Ընդհակառակն, շատ շնորհակալ կը լինիմ ձեր անկեղծութենէն:

— Լաւ ուրեմն, Նաբոլէոն գորովանօք կ'ըսէր. « Որչափ խաղաղ կը տեսնեմ, այնքան ես ինձ չեմ ներեր պահ մը զօրիորդ Պուրկուան ձենէ նախամեծար համարած լինելս »:

— Իրա՛ւ կ'ըսէք... Ի՞նչ պատասխանեց իմ սիրելի ախոյեանս:

— Աքանջացաւ մեծարանքին վրայ:

— Պարուհին: Այսքան դիւրաւ չափի պանծար իւր յաղթութեան վրայ եթէ ըստանձնէի այն դերն, զոր իրեն ողորմեցան իմ մերժումներս:

— Նս ալ այդպէս կը կարծեմ: Ուշէն յաղթանակեց առանց փառքի: Բայց յաղթանակեց:

— Մինչեւ այն օրն ուր ինձ հաճոյ թուի ճակատագիրը փոփոխել:

— Թող անմիջապէս հաճոյ թուի ձեզ, սիրելիդ իմ Եթիէնէթ, որովհետեւ ես ալ ձեզ նման կը ցաւիմ երեսընկեցութենէ մը, որ մեծապէս կը մնասէ ձեր համբաւոյն:

— Թող այդպէս լինի, ըստ օրիորդ Պուրկուան վայրկեան մը վարանելէ վերջ: Պիտի տեսնուի թէ մեր երկուքէն ո՛վ աւելի զօրաւոր է: Բայց այս մասին բան մ'ըսէք Շաբթի, և եթէ Կայսեր խօսիք իմ վրայ, հաճեցէք պաշտպանել զիս ցրելով այն թշնամական զգացումներն, զորս իմ կողմէ կը վերադրեն Ն. Վեհափառութեան:

Թաղրան յօժարութեամբ յանձն առաւ այդ պաշտօնը, մանաւանդ որ առաջնօրէ պատրաստուած էր: Խոստացաւ իւր բոլոր դիւանադիտութիւնը դործածել, և արդարեւ, շաբթի լրացած չէր երբ իւր դերասանուհւոյն կը ներկայանար, զուարթ ու խնդուներէս:

— Օրիորդ Մարսի նկատմամբ Նաբոլէոնի ունեցած փափկիկ համակրութիւնն, ըստ: յօդս ցնդեցաւ. յանուն քո տուած առաջին բաժանութիւններէս: Ձեր շնորհաց արժանանալու յոյսն այն աստիճան կը դիւթէ Կայսրն որ չգիտէ ի՞նչպէս յայտնել ձեզ իւր երախտադիտութիւնը:

— Ն. Վեհափառութիւնը շատ բարի է, պատասխանեց Եթիէնէթ՝ սպասուած հաճոյք մը ճաշակող կնոջ մը շնչով:

— « Իմ կողմէն շնորհակալ եղիք օրիորդ Պուրկուանի, յարեց Նաբոլէոն, և ծանուցէք իրեն թէ մտադիր եմ 50,000 ֆրանքի բարձրացնել իւր թոշակն ի Գոմէտի-Ֆրանսէզ: Ասոնց վրայ կը յաւելուի ապարան մը, և 100,000 ֆրանք զայն կահաւորելու համար »:

— Է՛հ, բաւ է, ընդմիջեց օրիորդ Պուրկուան, յաջողութեան դիւրութեան վրայ արբելի, և որ այլ եւս իւր փափաքները սահմանաւորելու հարկ չէր զգար: Թոյլ տուէք

որ խորհրդածեմ: Ձեր կայսրը միշտ միեւնոյն է: Կ'երեւակայէ որ, յաղթելու համար, միայն բաւ է երեսը ցուցնել:

— « Եթէ օրիորդ Պուրկուան վարանի, պնդեց դիւանագէտը, իւր ոտից առջեւ պիտի դնէք 100,000 Փրանքի թղտի մը և դքսուհւոյ պատուանուն: »

— Դքսուհի՛, դքսուհի՛ պիտի լինիմ, դռնեց դերասանուհին, որոյ այտերն իսկոյն շառագունեցան:

— Ն. Վեհափառութիւնն այս իրիկուն իսկ, ի Սէն-Քլու, տոհմագրերը ձեզ պիտի յանձնէ, եթէ չնորհ ընէք անդ երթալու:

— Լաւ, կ'ընդունիմ, ըսաւ Էթիէնէթ վեհապան՝ դէմքով մը:

— Ուրեմն այս իրիկուն, ժամ ութին, արքունեաց կառք մը տիկին դքսուհւոյն հըրամանաց ներքեւ պիտի գտնուի:

Ձայս ըսելով, Թալրան՝ արուեստագէտին ձեռքը զուարճալի լրջութեամբ մը համբուրելէ յետոյ՝ դուրս ելաւ:

Օրիորդ Պուրկուան օրուան մնացեալ մասը զոհեց ինքզինք անդ խնդրելի ընծայելու: Անուշաբոյր ջուրերու մէջ լողանալէ և իւր ձերմակեղէններն ու ակնախաղի մաղերը մուշկով խնկելէ՝ յետոյ, հիւանալի արդուգարդ մ'ըրաւ որոյ մանրամասնութիւններն Օթին-կէր կը պատմէ մեզ իւր «Օրիորդ Մարս և Էթիէնէթ» անուն գրքին մէջ. «Տասն անգամ, կը կարդանք անդ, սենեկապանուհին ատկուած է իւր տիրուհւոյն մազերուն ձեւը փոխել... Վերջապէս, ակէժածան երկար խոստովներու և կապոյտ փետուրներով զարդարուն անդուսեայ դրտակի մը որոշում տալէ յետոյ, Էթիէնէթ Պուրկուէլի ժանեակէ կոճկէն մը կը հագնի, որ ոսկոյ կոյտ մ'արժած է հէզ Ժիւրիթեր Շարթալի: Յետոյ, մին միւսէն ետեւէն տասներկու տարբեր շրջագրեստներ կը փորձէ, մինչեւ որ տասներեքերորդն, մութ կապոյտ թաւիչ տեսակ մը պատմութեան կամ կրկնոց, բաւական երջանիկ լինի իւր աչաց առջեւ չնորհ գտնելու համար: Այդ կրկնոցը որ լայն կերպով բացուած է կուրծքին վրայ, թոյլ կուտայ տեսնել իւր լանջքին հրապուրիչ ձեւերն, որ կը լողայ ժանեակներու կոհակաց մէջ: Իւր չնորհալիք և նուրբ հասակը կը սեղմէ սպիտակ մետաքսէ դօտւով մը, այնքան թեթեւակի սեղմուած, որ

ամենափոքրիկ շնչն անգամ բաւ է քակելու համար այդ դօտւոյն կապերը: Առջեւի կողմը, պարանոցէն մինչեւ ոտքը, բացուած կրկնոցը թոյլ կուտայ աչաց զարմանալ սպիտակ ժանեակին բանուածքն, որ կը տեսնուի թաւիչին վրայ, իբր թէ յասմիկ մը դրուած լինէր մանուշակներու փունջի մը մէջտեղ: Իւր ուսերուն վրայ, որք հրաշալի սպիտակութիւն մ'ունին, սեւ ժանեակէ քօլ մը կը ձգէ, որոյ ծայրերը մինչեւ ծունդերը կ'իջնեն: »

Այն ատեն հաճոյքով իմն ինք իւր վրայ հիւնալով իւր հայելոյն մէջ,

— Վերթուա՛ր, կ'ըսէ իւր սենեկապանուհւոյն, կը կարծե՞ս որ հագուստս պիտի հրապուրէ կայսրը:

Հռու էր այն ժամանակն ուր գեղանի Էթիէնէթ, կայսեր դէմ զայրացած, կ'երդնուր մինչեւ ցվերջ դիմադրել նոս:

Սակայն, ժամ ճիշդ ութին, ինչպէս որ որոշուած էր, չորս ձերմակ ձիերէ լծեալ չքեղ կառք մը կանգ առաւ օրիորդ Պուրկուանի դրան առաջ: Դերասանուհին անոր մէջ նետուեցաւ, և քանի մը վայրկեան վերջ կայսերական պալատան պատուոյ սանդուղէն վեր կ'ելնէր, հետեւելով Մարշանի, պալատան սպասաւորին:

Իւր մտած սենեակը դայն զարմացնելու յատկութիւնն ունէր. բաղմատեղնեան աշտանակ մը, բազմոց մը և փոքրիկ սեղան մը, այս էր բոլոր կահը: Բայց ապագայ դքսուհին իւր մեծութեան երազոց մէջ ընկղմած լինելով՝ ուշադրութիւն չըրաւ այդքան չնչին մանրամասնութեանց. ուստի կրցածին չափ տեղաւորուեցաւ, և թոյլ տուաւ որ միտքն օրորի ծիծաղկոտ ցնորքներու մէջ:

Քառորդ մ'անցաւ այս կերպով: Այնուհետեւ, իւր գտնուած տեղը տարօրինակ թուեցաւ իրեն և սկսաւ մտածել թէ կայսրըն յոյժ քիչ արարողութիւն ի գործ կը դրնէր զինքն ընդունելու համար: Ինքնիրեն ըսաւ թէ իւր յաղթականը չափով ուշանար գալու և սպասեց... տակաւին երեք քառորդ ժամ: Օհ, վերջապէս, Ն. Վեհափառութեան անհոգութիւնը չափը կ'անցունէր: Օրիորդ Պուրկուան անհամբերութեամբ զանգակն հնչեցուց:

Մարշան երեւցաւ:

— Ինչ կ'ուզէ օրիորդը, հարցուց վա-
ղաքալուր ձայնով մը :

— Կայսրն չը՞ գիտեր իմ հոս գտնուիլս :

— Ներեցէք, օրիորդ, բայց Ն. Վեհա-
փառութիւնը կը խորհրդակցի երկու զօրա-
վարաց հետ :

— Հաճեցէք յիշեցնել իրեն թէ իւր հրո-
մանաւ եկած եմ և ունկնդրութիւն մը կը
սպարտի ինձ :

— Կը թռիւմ, օրիորդ :

Քսան անվերջանալի վայրկեաններ ան-
ցան առանց պատասխանի : Օրիորդ Պուր-
կուանի արիւնը գլուխը ցատկած էր : Զան-
գալը բռնեց և կատաղաբար հնչեցուց :

Մարչան վերստին ցուցուց իւր հան-
դարտ ու հեղիկ դէմքը :

— Է՛յ . . . Կա՞յսրը . . . հարցուց դերա-
սանուհին դողդոջուն ձայնիւ :

— Տեսայ զինքն, օրիորդ :

— Ի՞նչ պատասխանեց :

— Կը խնդրէ ձեզնէ վայրկեան մ'սպա-
սել :

— Վայրկեան մը . բայց աւատիկ երկու
ժամ է որ կ'սպասեմ այս զազրելի ծակին
մէջ : Ըսէք Կայսեր որ անմիջապէս կ'ուզեմ
խօսիլ իրեն հետ :

Սպասաւորին բացակայութիւնն այս ան-
գամ կարճատեւ եղաւ : Երբ վերադարձաւ,
իւր դէմքը բոլորովին չփոթած էր :

— Աւա՛ղ, օրիորդ, ըսաւ հառաչելով :

— Ի՞նչ լուր կայ, խօսեցէք, սպարոն,

— Պատճառը սա է որ կը վախճամ զձեզ
վիրաւորելէ :

— Օ՛ն անդր . ես պատրաստ եմ ամեն
բան լսելու :

— Ձեր արդար անհամբերութիւնն իրեն
հաղորդելուս վրայ, « Սիրելիդ իմ Մարչան,
պատասխանեց Ն. Վեհափառութիւնը, բարի
երեկոյ մաղթէ իմ կողմէս օրիորդ Պուրկուա-
նի, և իրեն ըսէ թէ, եթէ չուզեր այլ եւս
սպասել, կ'արտօնեմ իրեն ելնել երթալ » :

— Լի՛րբը, գոչեց Էթիէնէթ կրակ կըտ-
րած : « Սիրելիդ իմ Մարչան, յարեց Պոնա-
բարթի ձայնը կեղծելով, բարի գիշեր մաղ-
թեցէք իմ կողմէ ձեր կնահաճոյ տիրոջ և
հաւաստեցէք իրեն թէ իմ մեկնումս արդո-
նելով, իմ սիրեւագոյն բաղձանքներս կա-
տարեց » :

Այս զայրացկոտ խօսքերուն վրայ, դե-
րասանուհին նստաւ այն կողմն որ քիչ մ'ա-
ռաջ ճաճանչաւէտ բերած էր զինքն և որ
այժմ ետ կը դարձնէր նուաստացեալ, յու-
ստխար :

Այն պահուն ուր ոտքը կառքէն ներս կը
դնէր, գետնայարկին մէկ պատուհանը կէս
մը բացուեցաւ և Թալլան խորամանկաբար
երեւնալով՝ « Գիշեր բարի, օրիորդ Պուր-
կուան, ըսաւ, յարգանքներս մատուցէք Պ.
Շաբթալի » :

Գլանադիտութիւնը կը յաղթանակէր,
և Կայսրն յիրաւի լուծած էր իւր վրէժը :

ՇԱՐԼ ԿԵՕԼԷԹ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԷՍ - ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հայ աղգը քիչ անգամ զգացած է այնքան սրտամորմոք կսկիծ մը որքան զգաց երբ Ամեն Տ. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Վարժապետեան աւանդեց իւր հոգին, Հայաստանեայց՝ Եկեղեցւոյն և Հայ ազգութեան մատուցանելէ յետոյ այնպիսի ծառայութիւններ որք պիտի գնահատուին դարուց ի դարս: Ամեն Հայ գիտէ թէ ի՞նչ էին Հանգուցելոյն սկզբունքներն, մանաւանդ ի մասին աղգային դաստիարակութեան. ամեն Հայ գիտէ թէ ի՞նչ խանդով աշխատեցաւ նա որպէս զի Նուպար-Շահնաղարեան Վարժարանէն յետոյ համանման Ուսումնարան մը հիմնուէր. ամեն Հայ գիտէ թէ աղգային նախնական և երկրորդական կրթութեան գաղափարն գրէթէ օրրանէն մինչեւ տապան զբաղեցուց այն մեծ անձնաւորութիւն որ ահա շիջաւ տարածամ: Երբ այս անդարմանելի աղետին գոյժը տարածուեցաւ ամենուրեք, ազգայնոց մէջ ընդհանուր փափաք մը նշմարուեցաւ վայելուչ հիմնարկութիւններով մեծարելու սրբազնակատար Պատրիարքի յիշատակն: Խումբ մ'աղգայինք, որք 1882ին և իւր մահամերձ օրերուն մէջ իսկ պատիւ ունեցած էին իւր նախադահութեան տակ գումարուիլ իւր խնդրանայ համեմատ Ուսումնարան մը կանգնելու նպատակաւ, իրենց համար սրբազան պարտաւորութիւն մը նկատեցին ժողովրդեան միահամուռ բաղձանայ չօշափելի ձեւ մը տալու նախաձեռնութիւնն ստանձնել: Այսպէս ծնունդ առաւ նոյեմբեր 11ին Վերսէս-Վարժապետեան Ուսումնարանի Ընկերութիւնն իւր հետեւեալ հիմնադրութիւն զոր

Տաճկաստանի Հայոց Կեդրոնական Վարչութիւնն նոյնութեամբ ընդունեց և հաստատեց:

1. Ի պատիւ Հանգուցելոյն, վայելուչ շիրիմ մը կանգնել Մայր-Եկեղեցւոյ մէջ:

2. Ներսէս Վարժապետեանի անուամբ Ուսումնարան մը հաստատել, ուր ընդունուին տեղացի և գաւառացի թոշակաւոր և ձրիավարժ աշակերտներ, գիշերօթիկ և ցերեկեայ:

3. Վեհ. Սուլթանի կողմէ հոգեւոյս Պատրիարքին պարգեւեալ Օրթագիւղի տանը մէջ բանալ առ այժմ այդ Ուսումնարանն (եթէ հնար լինի):

4. Արդէն ստորագրեալ 1430 ոսկոյ գումարն յատկացունել Ուսումնարանի բացման և նախնական ծախսոց:

5. Անմիջապէս ամեն երկրի աղգայնոց հրահէր կարգաւ հանդանակութեան մասնակցելու, արդիւնքն եկամուտի վերածելով Ուսումնարանի գոյութիւնն ապահովելու և աղքատ աշակերտներ ընդունելու համար:

Ընկերութեան Կանոնադիրն և Ուսումնարանի Յայտագիրն, որք մասնաւոր խնամով պատրաստուելու վրայ են, պիտի ենթարկուին Տաճկաստանի Հայոց Կեդրոնական Վարչութեանն, և հրատարակութեան պիտի արուին: Իսկ Ընկերութեան դրամական գործաւնութեանց համարատուութիւնն ամեն տարի պիտի մատուցուի Աղգային Վարչութեան, և յատուկ հրատարակութեամբ պիտի հաղորդուի հոյ հասարակութեան:

Աղգային Վարչութիւնն հնդամեայ շրջանի մը համար Ընկերութեան Գործ

ծագիր Մասնախմբին անդամացը յանձնեց նաև Կեդրոնական վարժարանի Հոգաբարձութիւնն, անոր տրամադրութեան տակ գնելով սոյն վարժարանի մատակարարութեան յատկացեալ Կալաթայի աղբային կալուածոց եկամուտն, որ տարեկան 800-1000 ոսկոյ կը հասնի: Մասնախումբս, նկատելով թէ այդ վարժարանի բացումն ալ հոգեւոյն Պատրիարքի բաղձանքներէն մին էր և թէ նա ալ հայ ժողովրդեան կրթական պիտոյից համապատասխանող կարեւոր հաստատութիւն մը պիտի լինի, յանձն առաւ յանուն Ընկերութեան հանգանակելի գումարէն վճարել Կալաթայի կալուածոց սնտուկին ունեցած 1,700 ոսկոյ ամբողջ պարտքը, որպէս զի Հոգաբարձութիւնը կարենայ վաղքնդ փոյթ բանալ Կեդրոնական վարժարանն:

Ներսէս-Վարժապետեան Ուսումնարանի Ընկերութեան Գործադիր Մասնախումբս կուգայ արդ հրաւեր կարգալ ամեն երկրի աղգայնոց, որպէս զի մասնակցին մի հանգանակութեան որոյ արդեամբ չլրիմ մը պիտի կանգնուի ի պատիւ այն Աղգապետին որ ամբողջ Հայութեան համար տքնեցաւ: Այս պատուոյն արժանի է այն մարմին որ Մայր-Եկեղեցւոյ դաւթին մէջ կը հանգչի այժմ, դրացի Յարութիւն Պէղծեանի մօրմնոյն, որպէս դրացի էին հոգիք մեր մեծագոյն Ամիրային և մեծագոյն Պատրիարքին: Այս պատուոյն արժանի են այն ոսկերք որք այնքան ստէպ խայտացին սուրբ զգացումներով

և որք հալեցան ի սէր փառաց Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Հրաւեր կը կարգանք ամեն երկրի աղգայնոց, որպէս զի մասնակցին մի հանգանակութեան որոյ արդեամբ ձրի կրթութիւն պիտի տրուի տեղական և դաւառական նախակրթարաններէ ելած ուշիմ պատանեաց: Դաստիարակութեան դատն ժողովրդային բոլոր խաւերուն մէջ այն աստիճան ծաւալդատած է այժմ որ աւելորդ իսկ է արտայայտել բարձրագոյն վարժարանաց կարեւորութիւնն, որք պիտի ծառայեն կաղմել բարոյական, դասական և գիտական կրթութեամբ օժտեալ անհատներ, օգտակար իրենց ընտանեաց, իրենց աղբին և իրենց հայրենեաց:

Մասնախումբս, որ գոհութեամբ կը տեսնէ թէ Խաղաղութեալ նպատակաց համար բաղմաթիւ հայաբնակ քաղաքաց մէջ հանգանակութեան ձեռնարկներ եղած են արդէն, վստահ է թէ ամեն երկրի Հայք պիտի հետեւին միևնոյն օրինակին և թէ այս կերպով Ընկերութեան գանձելիք գումարը պիտի համապատասխանէ ձեռնարկելի գործոց մեծութեանն: Մասնախումբս աղգային օրագրաց միջոցաւ անմիջապէս պիտի հրատարակէ բոլոր նուիրատուաց անունները, նպաստներն և կտակները: Նաև, այդ անուանք, յատուկ տախտակներու վրայ արձանագրուած, ի տես պիտի մնան Ուսումնարանի սրահին մէջ, որպէս զի աշակերտք իրենց բարերարները ճանաչեն և յիշեն յաւիտեան:

Անդամք Գործադիր Մասնախմբի

Ներսէս-Վարժապետեան

Ուսումնարանի Ընկերութեան

ԱԲԻԿ ՈՒՆՃԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԶՈՒՆԴ

ԿԱՐԱՊԵՏ ՍԵՎԱՃԵԱՆ

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ ԱՊԵՆԱԿԱՅԻՐ

ՄԿՐՏԻԶ ԷՍՍԵԱՆ ԱՊԵՆԱԿԱՅ (Մէհմետ-Ալի-Բալա խան, Կալաթա, Կ. Պօլիս)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՅՈՎՀԱՆ ՆԷՍ ԹՈՐՈՍԵԱՆ

ՍԵՐՈՎԵԼ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ Գալչապ (Սլորէ-Ֆէնտի խան, Կ. Պօլիս)

ՏԻԳՐԱՆ ԿԻՒՄԻԻՇԿԵՐՏԱՆ

ՏԻԳՐԱՆ ՓԵՇՏԻՄԱՆՃԵԱՆ

Կոստանդնուպօլիս

28 Դեկտեմբեր 1884

ԾԱՆՕԹ. Նուիրատուներէն կը խնդրուի Ատենադատի կամ Գանձապահի հասցէին ուղղել իրենց նպաստներն:

ԱՌԱՋԻՆ ՅՈՒՑԱԿ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Ի ՆՊԱՍՏ

ՆԵՐՍԷՍ-ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՈՒՍՈՒՄ ՆԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Տեսարք	Օտմ ոսկի	Հաճեան ի. եւ Ա.	
Էստեան Յ. եւ Մ.	200	Մանուկեան Եղբարք	50
Յակոբեան Մ. եւ Յ.	200	Մաքսուտեան Ս.	50
Ներսէսեան Գրիգոր	200	Զուհի Ա.	50
Կիւլպէնկեան Ս. եւ Ս.	100	Սամանճի Գ. եւ Մամճեան Մ.	50
Կիւմէեան Յովհաննէս	100	Քաւաքեան Յ.	50
Նորատուռեան Յարութիւն	100	Ասլանեան Մ.	25
Ունճեան Մ. եւ Ա.	100	Հարենց Ն.	25
Կիւմիւշկերտան Եղբարք	50		
Հալաճեան Բարսեղ	50		1,450

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ա Կ Ա Ն

Մ Ն Ո Ւ Ն Գ Փ Ր Կ Զ Ի Ն

Այլ պաշտեմքեղ ձիւն, ըսպիտակ զէրթ կոյս
Թառամեալ սիրոյ զուարթ յարշարոյս,
Ոյր հոգեակն յերկին սլանայ սգաւոր
Զերթ կիսանուաղ տարակ վերաւոր:

Ո՛հ, ո՛ւստի ադեօք անկանիք յերկիր,
Զուարթնոց քնքոյշ թեւէն լուսալիր,
Թե կարասն ամպոց ընդդէմ ճախրելով
Օգին մէջ սփռե ըղձեղ իւր թռչով:

Ուրապարտոյտ հասիկք փափկագեղք
Որ մայրեաց ըզգլուխ ալեւոր ներկէք,
Դուք իսկ էք տիպար սրտից անապակ
Ուր բոցս արծարծէ հաւատոյ հրեշտակ:

Կէս գիշեր բերէ ստուերս խաւարին,
Ամպոտ է երկինք և օդ ջրտաղին,
Լերինք սպիտակ, երկիր սառուցեալ,
Յատանին ծառոց ճիւղեր մերկացեալ:
Սառերուն մէջէն տղայք և աղջկունք
Ծերունիք, կանայք բոլոր զարգարունք
Դիմեն ըշտապաւ դէպի Սուրբ Տաճար
Ուր կոչէ զերենք պղղինձն օդահար:
Ի՞նչ փոյթ զի գիշերն է մութ անլուսին

Եւ թէ ճանապարհն ծածկէ կակուղ ձիւն,
Իրենց հաւատոյն հրաշէկ ճառագայթ
Այլ վարէ նոցա քայլեր դայլթ ի գայլթ:
Որպէս և երբեմն աստղ մի շողշողուն
Երկնային լուսով մերթ առաջնորդեց
Պետքն արեւելից մինչ յոտս Աստուծոյն:

Կէս գիշերոյն մէջ լուսին օրհներգներ,
Սիւռէ քահանայն խունկ ու հալուէներ,
Յերկիր խնարհած ճակատներն ամեն
Խորանին առջեւ աղօթս մրմնջեն:
Նաւա՛ղ մրկայոյդ ճամբո՛րդ վշտակոր,
Եկո՛ւր, մտեցի՛ր, դարիր հոս զանդորր:
Յաւերէ հիւծեալ սի՛րտ մատաղատի,
Սրբազան կայծով հոս Այլ կը վառի,
Բայց ինչ որ ունի նա յինքն երկրային
Բուրլառաց մուխին հետ յօդ կը ցնդին:
Հոս հաւասար են հարուստն ու աղքատ,
Հոս անտիպակ է սիրտ խանդակաթ,
Հոս Յոյս կայ միայն, Հաւատ, Գթութիւն
Ոճիրն այս տեղէն խոյս տայ դողդոջուն:
Հոգին անարատ սլանայ 'ռ Աստուած
Աշխարհից ցաւոց ծանրութիւնն մոռցած:
Ո՛հ, ե՛կ, տառապեալ, տե՛ս զայս տեսարան,
Լըսէ՛ քաղցրանուագ հնչիւնք օրհնարան,

Յայս ցուրտ գիշերին միսուրի մը մէջ
Երբի մարդկութեան փրկիչ լոյսն անշէջ.
Հովիւք օրոցին առջեւ ծուկն իջեր
Դիտեն կերպարանն այն նշուլագեղ,
Հըրեղէն հրեշտակք իջեալ ի վերուստ
Տօնն միաձայն Աստուծոյն գալուստ.
Կ'զմայլի նոցա պակուցեալ երկեր,
Երկինք անդ հեղու շողեր լուսածիր.
Օգային նուագս հնչին տաւիղներ,
Յնծութեան ձայնիւ թնդայ տիեզեր.
Ժպտի Մայս կուսանն ի տես որդեկին,
Երկնային հըրով վառի իւր հոգին:
Ո՞ր սիրտ չյուզուիր տեսեալ զայն խմբեակ,
Զայն Մանկիկն անբիծ լուսով որդորուն
Եւ մանաւանդ զայն աշխուհ երկնասուն,
Այն Աստուածորդին որ կու գայ աշխարհ
Իւր սրբանքէր արեան մէջ լուսալ
Զմեղս նախնական ապիրատ մարդոց,
Կըրել նոցա մօտ և վիշտս բազմահոծ.
Ո՞ր սիրտ չյուզուիր, ո՞վ չերկրպագեր
Աստուծոյ մ'այնքան գթած, մարդասէր:

Հա՛ւատք, երկնահոս անոյշ ճառագայթ,
Արեւ կազդուրիչ, քահ դու սրբահատ,
Դո՛ւ միթարիչ գերթ նշոյլ մ'անմահ,
Արարչին ծոցէն հոսիս մեր վըրայ:

Դո՛ւ որ ամոքես ըզցաւս մեր հոգւոյն
Երբ անտի յաւերժ խոյս տայ ցնծութիւն.
Երբ մոռնան ըզմեզ համայնք, եղբայր, քոյր,
Դու մեզ կը ժպտիս հրեշտակ սիրաբոյր:

Լե՛ր մեզ տառաջնորդ մինչ ի դուռնս մահու,
Դամբանին յանդուռդ քաղցրեկ լոյսդ հեղու,
Հոն ուր վերջանան վայելք աշխարհի,
Ըզ փառս երկնային դու ցցուր մեղի:

Ե. Զ.

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐԱՅ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1884 — 4 ՅՈՒՆՈՒԱՐ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Մարտիկոյ երեսփոխանին ամուսին Տի-
կին Քլովիս Հիւսկ, որ ինչպէս կը յիշուի՝ իւր
ամուսնական պատուոյն դէմ զրոյարտութիւն-
ներ ընող Մորէն անուան անձ մը սպաննած-
էր բէվոյլէրով դատական պաշտօնատան
մէջ, անպարտ արձակուեցաւ երդուեալ դա-
տաւորաց կողմէ:

— Պ. Ժիւլ Ֆէրրի հրաման զրկեց Շան-
կայի բոլոր ֆրանսական դործակատարաց
որպէս զի մեկնին Զինաստանէն: Քուրպէ
ծովակալը նոր օգնութիւններ ստացած լի-
նեւով, յունուար 6ին վերստին պաշարեց
Ֆորմոզա կղզին:

— Փարիզի սպանիական Դեսպան Պ.
Սիլվէլա հրաժարական տուաւ:

— Գերմանիոյ երեսփոխանական ժողո-
վոյ մէջ, դադթային խնդրոյն վիճաբանու-
թեանց միջոցին, Պիզմարք իշխանը պաշտ-
պանելով զայս աշխարհավարութիւն, ըսաւ
թէ երբէք Գերմանիոյ և Ֆրանսայի յարա-
բերութիւնք լաւագոյն չէին եղած և թէ
ծանր գծտութիւն մը չկայ Անգլիոյ հետ:

— Սայկոնէն հեռագիր մը կը ծանու-
ցանէ թէ Քամպոնի մէջ խռովութիւնք ծա-
գեր են Նորոտոմ թաղաւորին եղբոր ա-
պրտամբութեան պատճառաւ, որ ֆրան-
սական բերդին վրայ յարձակեր է:

— Վարչաւիսյէ կը հեռագրուի առ Հա-
վաս թէ Զարը նամակ դրեր է Պապին, գան-
գատելով Կաթոլիկ եպիսկոպոսաց ընթաց-
քէն, որք միշտ դժուարութիւն կը յարու-
ցանեն քաղաքային իշխանութեան դէմ:

— Գերմանիոյ արտաքին գործոց պաշ-
տօնատան մէջ նոր դիւանի մը հաստատման
համար հազար ոսկոյ վարկը զլացուելուն
պատճառաւ Երեսփ. ժողովոյ դէմ ժողո-
վըրդեան մի մասին մէջ տեսնուած շար-
ժումն հակառակ շարժում մը յառաջ կը
բերէ այժմ: Սկզբի ընտրողք նախընթաց
շարժում մէջ գումարեցան եւ միաձայնու-
թեամբ ընդունեցին որոշում մը ուղղեալ ի-
րենց յառաջդիմական երեսփոխան Պ. Պամ-
պէրլէրի, որով ազդուապէս կը բողբեն այն
շարժման դէմ որոյ նպատակն է անարգել
այժմու Խորհրդարանը՝ Պիզմարք իշխանը
բարձրացնելու պատրուակաւ:

— Ռուս լրագիրք ըստ սովորութեան
աննպաստ հրատարակութիւններ կընեն Մա-
կեդոնիոյ մասին, առանց ունին դնելու այն
հերքմանց որք բացարձակապէս կը ստեն
խժդժութեանց լուրերը: Պ. Աքսաբոֆ ալ
իւր Ռուս անուն թերթին մէջ կամբաստանէ
դԱստրիա թէ իրաց այս կացութեան պատ-
ճառ եղած է իւր կաթոլիկ կրօնի ծաւալ-
մամբ, ինչպէս նաեւ ֆրանսացի ձիգուիդաց
գործողութեամբ, որք մեծ թուով կը շրջին
եղեր Մակեդոնիոյ մէջ:

— Պ. Արատթոնի երէց որդին իւր հօր կողմէ, որ քիչ մը հիւանդ լինելով սենեկէն դուրս չէր ելնէր, ներկայ դռնուելով իւր հօր վարձակալաց տարեկան խնջոյքին, ըսաւ թէ իւր հայր առաւել քան յիսուն տարի, որպէս Խորհրդարանի անդամ և որպէս նախարար, ծառայած լինելով երկրին, չի կրնար սպասուիլ որ տակաւին երկար ժամանակ շարունակէ պաշտօն վարել քաղաքական կռուալից ասպարէզին մէջ, և թէ ամեն ոք պիտի ընդունի Պ. Արատթոնի իրաւունքն այլ եւս հանդիստ վայելելու մասին։ Պ. Արատթոն պիտի շարունակէ աշխատիլ մինչև իւր կենաց վերջին օրը, բայց ո՛չ քաղաքական ասպարէզի մէջ։ — Այս խօսքերէ կը մակարերուի թէ Պ. Արատթոն շատ չանցած միտք ունի դորձոց վարչութենէն քաշուելու։ — Թայֆը կը կարծէ թէ դէպ ի նոր տարւոյս վերջը Խորհրդարանը պիտի լուծուի, և ընտրական նոր օրէնքին համեմատ ժողովրդային նոր դասերէն առնուած ընտրողներուն քուէարկութեամբ, վերանորոգեալ Խորհրդարան մը պիտի կազմուի։ Գուցէ այն ատեն տեղի ունենայ Պ. Արատթոնի հրաժարումն։

— Պ. Պրիսոն վերստին նախագահ ընտրուեցաւ Թրանսայի երեսփոխանական ժողովոյ։ Մերակոյտն իւր նիստերը փակեց մինչեւ յունուար 29։

Ն Ե Ր Ք Ի Ն

Հասան Ծէհմի փաշա երեքշաբթի երեկոյ Պերլին հասաւ, ուր երեք կամ չորս օր կենալէ յետոյ պիտի շարունակէ իւր ուղեւորութիւնն դէպ ի Ղոնարա։ Ի բացակայութեան Ծէհմի փաշայի, Էֆէաֆի նախարար Քեամիլ փաշա փոխանորդաբար կը վարէ նաեւ գաւառական և կրօնական գործոց նախարարի պաշտօնը։

— Հոպարթ փաշա այս օրերս քանիցս կայսերական պալատը կոչուելով ինչ ինչ բաժանողներ ընդունեց և ի վերջոյ հրաման ստացաւ Ղոնարա ուղեւորելու։ Ար կարծուի թէ Ն. Վահմութիւնը պիտի երթայ ընկերակցիլ Հասան Ծէհմի փաշայի պատուիրակութեան։ Հոպարթ փաշա ճանաչեց ելաւ չորեքշաբթի իրիկուն։

— Վեհ. Սուլթանին հրամանաւ, արքունի նաւարանի մէջ կը շինուին եւրոպական դրութեամբ նոր և մեծ ջրհաններ, ընդամենական հովրութեամբ Զէխէնէի փաշայի։

— Վեհ. Սուլթանն Սպանիոյ աղետալի երկրաշարժէն զգածեալ, բարեհաճեցաւ Իւր անձնական գանձէն 300 Օսմ ոսկի նըւիրել մայրաքաղաքիս սպանիական դեսպան Քոէլլոյ կոմսին միջոցաւ։

— Գայմադամութեան և Միւտիրութեան պաշտօն խնդրող անձինք մինչեւ որ հանրային կրթութեան նախարարութեան կողմէ վկայագիր մը չբերեն թէ ուսած են տասնորդական դրութիւնն և մէթրական չափուց ու կշռոց նոր դրութիւնը, չպիտի ընդունուին այն յանձնախմբոյ քննութեան, որ Գայմադամներ և Միւտիրներ ընտրելու պաշտօնն ունի։

— Բաղէչի կուսակալ Յիքրի փաշա կը հեռագրէ թէ Ալնճի գաւառին մէջ Պատեկանի և Սիլվանի կողմերն ասպատականութիւններ ընող հուշակաւոր աւազակապետ Յադուպի եղբայրն եւս հանդերձ քանի մը մեղսակիցներով ձերբակալուած է։ Նազուպարդէն ս յաննուած էր։

— Թղթատարական վարչութիւնը կ'իմացնէ թէ Կարնոյ նահանգին մէջ Դերջանու գաւառակն եւս ոստիկանութեան ձեռամբ պարզ և յանձնարարեալ նամակներ զրկելու և ընդունելու սկիզբնաւորութիւն եղած է։

— Թուրքիոյ երկուական քննիչք մինչեւ ցարդ երկուական նախարարութեան իրաւասութեան ներքեւ կը գտնուէին։ Նպարքտական հրամանաւ՝ յիշեալ քննիչք այսուհետեւ հաշուական Ղիւանին իրաւասութեան ներքեւ պիտի գտնուին։

— Սատտէթ լրագիրը կ'իմանայ թէ Ատա նայի գաւառին մէջ Սասա գաւառակի կառավարիչ Ապալիւ Գատիր էֆէնտի ըստ հաճոյս կը վարէ իւր պաշտօնն առանց ուշադրութեան։ Յիշեալ կառավարիչը տասնորդի և այլ տրոց հաշուէն կառավարութեան հետ գործ ունեցող անձանց գոյքերն աժան գնով կը վաճառէ եղեր, առանց կանխաւ հաշիւներն օրինաւորապէս քննելու և անոնց պարտատէր լինելն հաստատելու։

— Կայսերական կառավարութիւնն հե-

տեւեալ կերպիւ պատասխանեալ է երկաթ-
թուղեաց միացման խնդրոյն առթիւ մայ-
րաքաղաքս եկող զբաւառեալաց խմբակին ,
որոց հովանաւորութիւնն ստանձնած է Օս-
մանեան Կ. Պանքան— «Ձեր ծրագիրը նկա-
տողութեան առինք , լրջաբար պիտի քննենք
զայն և կառավարութեան վերջնական որո-
շումն հնար եղածին չափ փութով պիտի
հաղորդենք ձեզ :»

—Տիկին Տըֆրին Կ. Պոլսէ չմեկնած 100
ոսկւոյ արծողութեամբ վերաբուժական գոր-
ծիք ու պիտոյք նուիրեց կայսերական բը-
ժշկական վարժարանի հիւանդանոցին :

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Հստ որոշման խառն ժողովոյ , Կրօնա-
կան ժողովոյ Ատենապետ Գեր. Խորէն Նար
Պէյ Սրբազան և անդամներէն Գեր. Սիմէոն
Սէֆէրեան և Գեր. Մատթէոս Իզմիրլեան
Սրբազաններն , Պատրիարքարանի գործա-
կատար Ֆրէնկեան Արքահայր Էֆէնտիի հետ
հինգշաբթի օրը Բ. Գուռն երթալով՝ Մեծ-
Եպարքոս Բարձր. Սայիտ փաշայի ներկայա-
նալ խնդրեցին :

Ն. Բարձրութիւնը ցաւ յայտնելով պատ-
գամաւորաց այս անտկնկալ և առանց կան-
խաւ իմացնելու գալստեան վրայ , որով յոյժ
գրաւեալ լինելով չէր կրնար ընդունիլ զա-
նոնք նոյն ժամայն , յանձնարարեց իւր խոր-
հրդականին որպէս պի պատգամաւորաց
խնդրանքը լսելով իրեն հաղորդէ : Հետե-
ւաբար պատգամաւորութիւնը խորհրդական
Էֆէնտիին հետ տեսակցելով՝ Տեղապահա-
կան Պուլրութեւն փութացման հարկն ըլ-
գացուց և անտի գատական պաշտօնաւորն
գնաց :

Էփեաֆի նախարար Քեսափլ փաշա , որ
գատական և կրօնական գործոց նախարարի
պաշտօնը կը վարէ առժամապէս , ընդունեց
պատգամաւոր Սրբազաններն և խոստացաւ
պէտք եղած ջանքն ընել խնդրուած Պուլ-
րութեւն փութացման համար :

Նոյն իրիկուն , ուշ ժամանակ Բարձր.
Մեծ-Եպարքոսին կողմէ պաշտօնատար մը
Ազգ. Պատրիարքարան գալով , Քարու Քէհ-

եափի Արքահայր Էֆէնտիին փնտռեց և հը
րաւիրեց Բ. Գուռն երթալ և Ն. Բարձրու-
թիւնը տեսնել :

—Քաղաքական ժողովը այս չորեքշաբթի
օր դուստրեցաւ ի Ղալաթիա , և յետ քա-
նի մը յարաբերական և մասնական խնդրոց
կարգադրութեան , հետեւեալ պաշտօնական
ծանուցումն ուղղեց ազգային լրագրաց , նը-
կատելով որ Տեղապահական պուլրութեւն
յապաշտումն այլ ընդ այլոց զրոյցներու առիթ
ստեւած է հաստատութեան մէջ :

«Ազգային Կեդրոնական Վարչութեան
Քաղաքական ժողովը ներկայ պաշտօնական
ծանուցմամբ հարկ կը համարի յայտարարել
թէ Պատրիարքական Տեղապահ Հօր պաշտօ-
նին նկատմամբ խառն ժողովոյ կողմէ Բ.
Դրան մատուցեալ վերջին Թաղրիքը Տէրու-
թեան Նախարարաց ժողովոյն ընդունելու-
թեան արժանացած , եւ ներկայացուած է
Օղոտտարաւ Սուլթանին բարձր վաւերաց-
ման . հետեւապէս անհիմն են այս մասին
հրատարակուած այլ ընդ այլոց զրոյցք , և կը
յուսացուի որ ի Պատրիարքարան կը հասնի
ընդ հուպ սպասուած բարձրագոյն հրամա-
նադիրն : »

2 Յունուար 1885

Ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պոլիս

—Մայրաքաղաքիս Տիվրիկի Ազգ. կալ-
ուածոց Հոգաբարձութիւնը գրով մը կը
ծանուցանէ Ազգ. Վարչութեան , թէ անց-
եալ տարի Տիվրիկի նորաչէն վարժարանին
հրկիւման պատճառ մեղսակից համարուած
անձինք , որք Սեբաստիոյ մէջ բանտարկուած
էին , ազատ արձակուեալ են Սեբաստիոյ Իթ-
համիէ դատարանին որոշմամբ , և դատա-
րանն այժմ Տիվրիկի վարժարանի տեսչու-
թեանէն դատական ծախք կը պահանջէ եղեր :
Հոգաբարձութիւնը կը խնդրէ Ազգ. Պատ-
րիարքարանէն , որ միջոցներ ցոյց տայ սոյն
գատն աստ ի Կ. Պոլիս փոխադրելու հա-
մար , և միանդամայն ապահովութիւն տըր-
ուի թէ արդի նորաչէն վարժարանն , որ
այժմ հոգեւոր Ս. Պատրիարքի անուամբ
Ներսիսեան կը կոչուի , գերծ պիտի մնայ
յապազային ու և է վտանգէ :

—Ռուսական Կաւալ լրագրոյ մէջ կը
կարդանք .

«Ստորագրելու և լսելու որ «Մշակ» կրագրոյ խմբագիր Պ. Գրիգոր Արծրունի ի մօտոյ արտասահմանէն Թիֆլիզ պիտի վերադառնայ և անմիջապէս պիտի ձեռնարկէ իւր լրագրոյ հրատարակութեան : Այս լրագր մեծ ուրախութիւն պատճառեց տեղական Հայոց, որովհետեւ, ներկայ միջոցիս, միւս երկու հայերէն լրագիրներն այնչափ համակրելի չեն Հայոց» :

— Այս երեքշաբթի Տարեգլխի առթիւ՝ մայրաքաղաքի քարոզիչներէն, քահանայներէն, Ազգային Ժողովոյ և Վարչութեան և Թաղական խորհրդոց անդամներէն և ուրիշ պատուաւոր ազգայիներէ շատեր նախ յետոս աղէմատուն և ապա ի Պատրիարքարան երթալով, իրենց շնորհաստեղծութիւնները մատուցին Ամեն Տ. Եսայի Ս. Պատրիարքին և պատրիարքական Տեղապահ Ռուսուղլեան Գեր. Տ. Գէորգ Ս. վարդապետին :

— Էվգաֆի նախարար Վսեմ. Քեամիլ փաշա, որ Դատական և Կրօնական գործոց նախարարութեան պաշտօնն եւս կը վարէ այժմ, յատուկ պաշտօնատար մը զրկեց ի Պատրիարքարան՝ որ Նորին Վսեմութեան այցեւորմը Գեր. պատրիարքական Տեղապահ Հօր յանձնելով շնորհաստեղծ նոր տարին ի դիմաց Վսեմ. նախարարին :

Նմանապէս մայրաքաղաքի Պարսից հիւպատոսը Պատրիարքարան երթալով շնորհաստեղծ նոր տարին ի դիմաց պարսկական դեսպան Վսեմ. Մոհսին Խանի : Այս երկու բարձրաստիճան պաշտօնատարք արժանաւայել պատուով ընդ ունեւեցան Պատրիարքական Գեր. Տեղապահէն :

— Անցեալ չարթու Մուշէն Պատրիարքարան հասած հանրադիր մը, որ ստորագրեալ էր Մշայ դաշտի, Պուլանըխի, Վարտոյի, Զխուրի և Խնուսի բաղմամբիւ քահանայներէ և զիւղապետներէ (բէ), կը խընդրէր որ Ամեն Տ. Մկրտիչ Արքապան Խրիմեան վանահայր կարգուի Ս. Կարապետի վանուց :

Շաբաթ օրն ալ Մշայ վանուց միաբանութենէն երկու հանրադիր հասան ի Պատրիարքարան, որք կը ծանուցանէին թէ Միաբանութիւնն՝ երկու կուսակցութեանց բաժնուած՝ երկու ցանկ պատրաստեր է զատ զատ քուէարկութեամբ :

Առաջին կուսակցութիւնն ընդ նախա-

դահութեամբ առժամայ վանահայր Քաջունի Յակոբ վարդապետի, հետեւեալ եկեղեցականներն ընտրեր է .

Խրիմեան Արքապան 10 քուէ

Մատթէոս Եպիսկոպոս 9 »

Նրեմիա Եպիսկոպոս 8 »

Միւս կուսակցութիւնն ալ, ընդ նախադահութեամբ Շահնազարեան Խորէն վարդապետի, հետեւեալ եկեղեցականներն ընտրեր է .

Գրիգորիս Եպիսկ. Ալեքսանդր 9 քուէ

Արիստակէս » Դերձակեան 8 »

Հմայեակ » Դիմաքսեան 7 »

Զարմանալի կէտ մը սա է որ ընտրողաց ոմանք երկու հանրադրոց մէջ եւս ստորագրութիւն ունին, սակայն՝ ըստ մեր կարծեաց՝ Խրիմեան Արքապան ըստ օրինի Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւամբ՝ արժանի է այդ մեծ վանուց վանահայրութեան, քանի որ նոյն վանքին վրայ Եպիսկոպոս ձեռնադրուած է հոգեւոյ Տ. Գէորգ Կաթողիկոսէն, և նոյն վանքին միաբանութիւնն ըրած է, մինչդեռ միւս ընտրեալներէն ոչ մին միաբան է նոյն վանուց, և ամենն ալ ուրիշ վիճակներու վրայ Եպիսկոպոս ձեռնադրեալ են :

Սահմանադրապէս եւս Խրիմեան Արքապան միայն իրաւունք ունի վանահայր լինելու, քանի որ Միաբանութեան այդ քուէարկութեան մէջ մեծամասնութեան քուէն ստացած է ,

— Ինչպէս որ ծանուցեր էինք, ըստ յանձնարարութեան Քաղաքական Ժողովոյ, Գեր. Տ. Խորէն Նար-Պէյ Արքապան անցեալ չարթու ուսական դեսպանատունն երթալով տեսակցեցաւ Պ. Օնուի հետ և տեղեկութիւն խնդրեց բարեյիշատակ Աղա Յ. Իլմիրեանցի կտակած 20,000 ռուբլի գումարին ի Պոլիս եկած լինելուն վրայ :

Վսեմ. Խորհրդականը պատասխաներ է թէ արդարեւ այդ գումար հասած է ի դեսպանատուն Ներսէս Պատրիարքի հասցէին ուղղեալ գրութեամբ մը, սակայն Հայոց Ազգն այժմ պաշտօնապէս վաւերացեալ ներկայացուցիչ մը չունենալուն պատճառաւ, դեսպանատունը մինչեւ ցարդ կը վարանի յանձնել յիշեալ գումարն, և արդէն ծանուցած է զայս արտաքին գործոց նախարարութեան ի Բեդրասլուրի :

ԵՐՈՒԱՆԴ Մ. ՊՈՅԱՃԵԱՆ

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ՎԱՋԱՌԱՏՈՒՆ ՍԵՒ ԵՒ

ՇԱԳԱՆԱԿԱԳՈՅՆ ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐՈՒ

204. - Մահող Բաշա Բաշա, Բիշ - 204.

ՍԵՒ ՆԵՐԿ

Թուրքիոյ մէջ պատրաստուած եւ գործածուած սեւ ներկերուն վրայ իմ կատարելագործեալ բաղադրութեանս առաւելութիւնը յաճախորդք դէժ մի անգամ փորձելով կրնան հասկնալ :

ՇԱԳԱՆԱԿԱԳՈՅՆ ՆԵՐԿ

Կան այնպիսի մազեր որ ի բնէ շագանակագոյն բայց ճերմակ մազերով խառն են : Իմ բաղադրութիւնս , որ տասն վայրկեանի մէջ մազերն իրենց բնական գոյնին կը դարձնէ , առ նուազըն մինչեւ մէկ ու կէս ամիս կրնայ տեւել , առանց անոնց բնական փայլունութիւնը կորսնցնելու , որով կը գերազանցէ Եւրոպայէ եկած սեւ և շագանակագոյն նմանօրինակ ջուրերը , մանաւանդ որ քիմիական բաղադրութեամբ փնտասկար հետեւանք յառաջ չբերեր բնաւ : Վերոյիշեալ ներկերը գործածելու եղանակին վրայ տեղեկութիւնք կը տրուին վաճառատունէս : Գիները յոյժ գոհացուցիչ են :

Շատ գնողներու համար 20 Օլո զեղշ կը լինի :

14—52

ՏՕՔՔԻՕՐ ՄԱԳՍՈՒՆ ՇԵՐՊԵՐԵԱՆ

ՎԱՅՆԵԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱՂԱՍՏԱՆԵՆ

Փ Ա Ր Ի Զ Ո Ւ

Իւր բնակութիւնն հաստատած լինելով ԲԵՐԱՆ , ՊԵՐԵԱՐ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13 , պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ ամէն օր , կէս օրէն վերջ , տաճկական ժամն Յէն մինչեւ 10 կընդունի ամեն տեւ

սակ հիւանդներ , ինչպէս նաեւ մանկաբարձական քննութեանց կարօտ և այլ հիւանդութեանց ենթակայ կիները :

Տօքթօրը բայի սոյն ժամերէն կը գլուխուր չորեքշաբթի և շաբաթ օրերն առաւօտեան ժամը 4 1/2 էն մինչեւ 6 1/2 , Պոլիս Աքսէրայ Լալէի Ենչիլ Թուրուսլա թիւ 101 ֆախաղեան էֆէնտիի դեղարանն և երկուշաբթի , հինգշաբթի օրերն ալ առաւօտեան ժամը 4 1/2 էն 6 1/2 Պոլիս , Պահչէ գարու Մէրհամէթճեան էֆէնտիի դեղարանը :

Իսկ երեքշաբթի և ուրբաթ օրերը , մինչեւ կէս օր , Գուլիուսնճուք , Խարայէլ էֆէնտիի դեղարանը :

Յիշեալ Տօքթօրը պատրաստ է միշտ և ամէն տեղ ձրիաբար դարմանել իրեն դիմող կարօտ հիւանդներն , ինչպէս նաեւ աղքատ ծննդաբերներու քով երթալ և հարկ եղած դարմանն ընել անձնուիրաբար :

1882Ի ԳԻՍԱԻՈՐԸ



Այս հռչակաւոր վաճառքի սիւկարի թուղթը որ ամենաբնութիւն տեսակէ է , կը յանձնարարուի ծխողաց : Մայրաքաղաքիս բժշկական վարժարանը փորձելով հաստատած է թէ և ոչ մէկ թունաւոր բուսական նիւթ

կը պարունակէ : Ընդհանուր շտեմարանն է՝ բոլոր ճաճկատանի համար Ղալաթիա , Մոմխանէ փողոց Սիթէ Ֆրանսէզ , 82 թիւ , Պ. Զաքարիա Մալանկիաէսի վաճառատունը :

Կը գտնուի նաեւ Կ. Պոլսոյ և Ղալաթիոյ բոլոր ծխալաճառաց քով :

41—78

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑ

1885 ՏԱՐԻՈՅ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՓԲԿԶԻ

ԱԶԳԱՅԻՆ ՀՐԻԱՆԳԱՆՈՅԻ

Գին 3 դահեկան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԵՍԷԱՆ

(ԱՐԱՄԵԱՆ)

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՔ

Տօմարական գիտելիք — Երանականագրութիւն — Դրամք գլխաւոր ազգաց — Վեճակաբանական բեռեւէք — Օտմ. կայսրութիւն — Աւագանի կայսերական պալատան — Նախարարք Բ. Դրան — Պաշտօնատարք մայրաքաղաքիս — Հրամանատարք բանակաց — Կուսակալք նահանգաց — Պատրիարքուք և Ազգապետք — Օտմ. դեսպանք — Գեսպանք օտար տէրութեանց — Վիճակադրութիւն — Հայադէղի աստիճանաւորք և պաշտօնեայք — Հայապետութիւն — Հայոց — Եկեղեցականութիւն — Կեդր. վարչութիւն — Յանձնաժողովք — Պաշտօնատարք Պատրիարքարանի — Առաջն. վիճակք — Մայրավանք — Վանօրայք — Թաղօրայք Կ. Պոլսոյ — Համագումար թաղօրէից — Բարեգործական և Կրթական հաստատութիւնք — Վանք և վիճակք Ի Ռուսաստան . եւ եւ . —

Աստիճանաւորք և պաշտօնեայք օտար տէրութեանց . — Բժիշկք . — Փաստարանք . — Լրագիրք — Վիճակադրութիւնք օտար տէրութեանց — Պարզառումար Օրացոյց — Ծանուցումներ :

Կը գտնուի ամէն Հայ գրավաճառացքով : Կեդրոնատեղին է Սրամեան տպարան . Զաքմագճըլար , Յակոբեան խան թիւ 15 :

Ա. Յ. ՍԱՆՏԱՆԺԵԱՆ

ՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ

ԵՐԱԶԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՒ


Ղալաթա , Թիւնէլի դէմ , Թիւ 33

Վաճառատանս մէջ կը գտնուին Գաղղիոյ և Գերմանիոյ համալուսւոր գործարանաց ընտրելագոյն Գաշակէք անմըրցելի տփան գներով և ամէն տեսակ երաժշտական գործիներ , նաեւ խաղի ու սիկառի ընտիր թղթեր և սալօնի յատկացեալ լուցիկ , որոց մասին եւս կը խոստանայ գոհացնել իւր յաճախորդներն :

Վաճառատունս պատրաստ է նաեւ զերոյ նշանակեալ ապրանց վրայ յանձնարարութիւններ ընդունիլ և արագ գործադրել կարի գոհացուցիչ պայմաններով :

8-56

ՍԵՂԱՆԻ ՐՄՊԵԼԻ



ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ ԲԵՐՄԱՆԻ

Նման « Ծարթընդ » ի դիւնոյն , ախորժահամ և յոյժ առողջարար ըմպելի մ'է և մեծապէս կը դիւրացնէ մարսողութիւնը :

Գլխաւորապէս կը գտնուի Պ. Պէրթէն եղբարց քով , Ղալաթիա , Սիթէ Ֆրանսէզ :

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ